

**«ԼՈՒՍԱԿՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Երևան 2021թ.

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, որդեգրելով «Արարող հասարակության» գաղափարախոսությունը, սույն քաղաքական ծրագիրը կազմել է հետևյալ առաջնահերթություններով.

- Ծրագրի սկզբում ներկայացված է կուսակցության գաղափարախոսությունը՝ «Արարող հասարակության» գաղափարախոսությունը.
- Այնուհետև շարադրված է գաղափարախոսությունը կյանքի կոչելու հայեցակարգը, այն է՝ «Լուսավորչականությունը».
- Հայեցակարգից հետո տրված է կուսակցության ռազմավարությունը, այսինքն՝ անհրաժեշտ ռեսուրսներով հագեցած այն հենքային առաջնահերթությունները, որոնց իրագործումը հնարավոր է դարձնում «Արարող հասարակության» գաղափարախոսության կիրառումը, «Լուսավորչականության» հայեցակարգով.
- Կուսակցության կողմից ընդունված ռազմավարության հիման վրա ներկայացվում է ոլորտային քաղաքական հայեցակարգերը, որոնց նպատակն է յուրաքանչյուր ոլորտում ստեղծել անհրաժեշտ և բավարար պայմանների այնպիսի համակցություն, որը հնարավորություն կընձեռի հանրությանը ունենալ «Արարող հասարակության» գաղափարախոսությունից բխող, մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող համապատասխան միջավայրեր:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը իր գործունեությունը կառուցել և կառուցելու է բացառապես վերոհիշյալ առաջնահերթություններով: Հենց վերջիններիս հենքի վրա էլ ձևավորվելու է այն ճանապարհային քարտեզը, որը «սպառողից» կտանի դեպի «արարող» հանրություն, «քողարկված ստրկատիրությունից» դեպի ազատ և երջանիկ հասարակություն:

Կուսակցությունն իր քաղաքական ծրագրում առանձնակի դեր ու նշանակություն է տալիս մարդուն և հասարակությանը այնպիսի վերահսկողական մեխանիզմներով օժտմանը, որոնք անկասելի կդարձնեն Հայաստանի Հանրապետությունում մարդակենտրոն պետականության կառուցումը:

«ԼՈՒՍԱՎՈՐ ՉԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՅԵՑԱԿԱՐԳԸ

«Չայոց աշխարհում արարում էր, և չարն այնտեղ տեղ չուներ»:

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը, նպատակ ունենալով Չայոց աշխարհում կառուցել անվտանգ, ապահով, արդար, բարեկեցիկ և մարդու ազատ զարգացումը երաշխավորող հասարակություն, ստանձնելով պատասխանատվություն Աստծո, մարդկության, ազգի, ընտանիքի և յուրաքանչյուր անհատի նկատմամբ, իր գործունեության հիմքում դնում է «Արարող հասարակության» գաղափարը:

Որպես գաղափորախոսության իրականացման հայեցակարգ՝ կուսակցությունը հռչակում է «Լուսավորչականությունը»:

Իր կողմից որդեգրած գաղափարներն իրագործելու համար կուսակցությունը սահմանում է հետևյալ առաջնահերթությունները՝

- մարդու անվտանգությունը,
- մարդու կյանքը և բարեկեցությունը,
- մարդու ազատությունը,
- անհատականության ազատ զարգացումը,
- արդարությունն ու հավասարությունը,
- հասարակության ինքնակառավարումը և յուրաքանչյուրի համար տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը:

Մարդը հասարակության հիմնարար միավորն է, իսկ հասարակությունը՝ մեծ ընտանիք:

Մարդու անվտանգությունը

Քանի որ ոչ ոք և ոչինչ իրավունք չունի մարդու կյանքի և ազատության դեմ սպառնալիք ստեղծել, ուստի հասարակությունը և պետությունը պետք է ստեղծեն անհրաժեշտ և բավարար գործիքակազմ և միջոցներ ապահովելու համար մարդու, հասարակության և պետության կենսական անվտանգությունը և չեզոքացնել դրանց դեմ ուղղված բոլոր հնարավոր սպառնալիքները:

Մարդու կյանքը և բարեկեցությունը

Քանի որ մարդու կյանքը հանդիսանում է բարձրագույն արժեք, ուստի հասարակության և պետության գերնպատակը պետք է դարձնել յուրաքանչյուր մարդու արժանապատիվ կյանքի ապահովումն ու երաշխավորումը:

Մարդու ազատությունը

Քանի որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար, չի կարող լինել ոչ ոք և ոչինչ մարդուց, նրա արժանապատվությունից և դրա հիմք՝ ազատությունից ու իրավունքներից առավել:

Անհատականության ազատ զարգացումը

Քանի որ արդար հասարակությունում ցանկացած մարդ ունի բազմակողմանի զարգացման և ինքնահրացման իրավունք, ուստի հասարակությունը և պետությունը պետք է ապահովեն անհրաժեշտ և բավարար պայմաններ կրթության և դաստիարակության նույնակերպ հասանելիությունը բոլորի համար և անհրաժեշտ պայմաններ ստեղծեն մարդու համար՝ իր ստեղծագործ ընդունակությունները և շնորհները իրագործելու նպատակով:

Արդարություն և հավասարություն

Քանի որ մարդիկ ծնվում են հավասար, օժտված են արդարության և հավասարության անքակտելի իրավունքով, հասարակությունն ու պետությունը պետք է ապահովեն այդ իրավունքների իրացման համար անհրաժեշտ և բավարար գործիքակազմն ու միջոցները:

Հասարակության ինքնակառավարումը և յուրաքանչյուրի համար տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը

Քանի որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել հասարակության գործերի կառավարմանը և մարդու կյանքի որակի բարելավմանը, ուստի հասարակությունը և պետությունը պետք է ապահովեն անհատի այս կարևորագույն իրավունքի իրացումը: Այդ նպատակի իրագործումը պահանջում է յուրաքանչյուր անհատի համար տեղեկատվության թափանցիկության և հասանելիության ապահովում, քանի որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ունենալ հասարակությանը վերաբերող որոշումների ընդունման և կատարման վերաբերյալ ճշմարիտ տեղեկատվություն: Այս

իրավունքի պատշաճ ապահովումը հասարակության և պետության ուղղակի պարտականությունն է:

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով վերոհիշյալ առաջնահերթություններով՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է հետևյալ ռազմավարական քայլերի իրականացումը՝

- անհրաժեշտ է ձևավորել և երաշխավորել անհատական, հանրային և պետական կայուն կյանքի կազմակերպման համար պատշաճ և բավարար **արտաքին և ներքին ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ**,
- անհրաժեշտ է ձևավորել անձի և հանրության շարունակական զարգացման, իրավական ու քաղաքական հասունացման համար անհրաժեշտ **ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ (ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ) ՄԻՋԱՎԱՅՐ**,
- անհրաժեշտ է ապահովել անհատական և հանրային ներուժն արդյունավետորեն բացահայտող, զարգացնող ու օգտագործող, դիմադրողականության և ադապտիվության բարձր մակարդակ ունեցող, **ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**,
- անհրաժեշտ է կառուցել հանրության դինամիկ զարգացմանը նպաստող առաջադեմ, առողջ և արդիական **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**՝ հիմնված ժողովրդավարական ներկայացուցչական ինստիտուտների ձևավորման և դրանց զարգացման վրա,
- անհրաժեշտ է կառուցել մարդու իրավունքներն ու ազատությունները, իրավակարգի կենսագործումն արդյունավետորեն երաշխավորող, վեճերի արդյունավետ լուծման **ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը վերը նշված ռազմավարական քայլերի իրականացման համար որդեգրում է հետևյալ սկզբունքները՝

- հետամուտ լինել արժանապատիվ ազգային ինքնության արժեհամակարգի պահպանմանը,
- գործել բացառապես Հայաստանի ազգային շահերով և ազգային արժանապատվությամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՍԵՂՄԱԳԻՐ

Անվտանգային միջավայր

1. Ժողովրդագրական հատուկ և հրատապ քաղաքականության մշակում ու իրականացում (ծնելիության աճ, ներգաղթի համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և արտագաղթի նվազեցում):
2. Առողջապահության ոլորտների ֆինանսավորման ավելացում, այդ ոլորտներում ներդրումների խրախուսում: Մինչև 18 տարեկան, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացիների առողջական խնդիրների բացահայտման, առողջության վերականգնման, պահպանման և շարունակական հոգածության պետական քաղաքականության գործարկում: Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում նոր բժշկական կենտրոնների ստեղծում և գործող բժշկական կենտրոնների արդիականացում, նոր տեխնոլոգիաների և միջազգային կառավարման փորձի ներդրում և կիրառում: Ոլորտում միջազգային պահանջներին համապատասխանող ստանդարտացման գործընթացի իրականացում:
3. Անվտանգային միջավայրի նոր հայեցակարգի, ռազմավարության, մարտավարության և գործողությունների նոր ծրագրի մշակում:
4. Նոր՝ փաստացի սահմանի պաշտպանական համակարգերի կառուցում և ուժեղացում:
5. Բանակաշինության նոր հայեցակարգի մշակում, բանակի տեխնոլոգիական ամբողջական հագեցում, մարդակենտրոն բանակի ներդրում, բնակչության ռազմական գործին համընդհանուր ներգրավում:
6. Ռազմական արդյունաբերության և հառակից ոլորտների զարգացում, այդ ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, պետական պատվերի գործունե համակարգի ներդրում, արտահանման խրախուսում: Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում նոր արտադրությունների ստեղծում և գործող արտադրությունների արդիականացում, նոր տեխնոլոգիաների և միջազգային կառավարման փորձի ներդրում և կիրառում: Ոլորտում միջազգային պահանջներին համապատասխանող ստանդարտացման գործընթացի իրականացում:
7. Արցախի Հանրապետության և նրա բնակչության անվտանգության երաշխավորմանն ուղղված հայեցակարգի հստակեցում և գործողությունների իրականացում, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանն ուղղված հստակ մարտավարության իրականացում:
8. Տեղեկատվական անվտանգության ապահովում:

Արտաքին քաղաքական միջավայր և սփյուռք

1. Արտաքին ընդհանուր և հատուկ քաղաքականության հստակեցում, ռազմավարական գործընկերների, դաշնակիցների, բարեկամների և

հարևանների հետ արտաքին քաղաքական գործունեության հստակեցում, կանխատեսելիության և վստահության քաղաքականության վարում:

2. Արտաքին քաղաքականության իրավական սպասարկման դոկտրինի գործարկում:
3. Միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող աշխատանքների ակտիվացում և արդյունավետության բարձրացում, այդ աշխատանքներին հասարակական կազմակերպությունների և անհատների ներգրավում:
4. Դիվանագիտական աշխատանքի արդյունավետության, գայթակղության և որակի բարձրացում, այդ ոլորտում մասնագետների պատրաստման համակարգի արդիականացում:
5. Մերձավոր Արևելքում դիվանագիտական և արտաքին քաղաքական այլ գործիքների ակտիվացում:
6. ՌԴ հետ ռազմավարական, դաշնակցային հարաբերությունների հստակեցում և շարունակական զարգացում:
7. ԵՄ հետ խորը և համապարփակ գործընկերային հստակեցում և շարունակական զարգացում. CEPA-ի կիրարկում՝ ճանապարհային քարտեզին համահունչ:
8. ԱՄՆ հետ գործընկերային հարաբերությունների հստակեցում և շարունակական զարգացում:
9. Չինաստանի հետ գործընկերային հարաբերությունների հստակեցում և շարունակական զարգացում:
10. Իրանի հետ բարեկամական հարաբերությունների հստակեցում և շարունակական զարգացում:
11. Վրաստանի հետ բարեկամական հարաբերությունների հստակեցում և շարունակական զարգացում:
12. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, միջազգային իրավունքի այլ իրավախախտումների համար միջազգային իրավական և անհրաժեշտ քաղաքական գործընթացների նախաձեռնում:
13. Սփյուռքի ներուժի բացահայտում, զարգացում ու Հայաստանի պետականաշինության, «ազդեցիկ ազգ» հայեցակարգի գործարկման համատեքստում ուղղակի և անուղղակի ներգրավում:

Կրթադաստիարակչական և սոցիալ-մշակութային (լուսավորչական) միջավայր

1. Դեպի համամարդկայինը տանող ազգային արժեհամակարգային հենքով կրթադաստիարակչական ամբողջական և համալիր համակարգի ներդրում՝ նախակրթարան, հանրակրթություն, միջին մասնագիտական և բարձրագույն

կրթություն, հետբուհական և ցկյանս շարունակական կրթություն, հոգևոր, սպորտային և մարտական դաստիարակություն:

2. Գիտական ներուժի բացահայտմանը, զարգացմանը և արդյունավետ օգտագործմանը ուղղված հստակ և հրատապ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:
3. Կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման շարունակական ավելացում, այդ ոլորտներում ներդրումների խրախուսում: Կրթության և գիտության՝ տնտեսության իրական հատվածի հետ կապի ստեղծում և արդիականացում:
4. Կրթադաստիարակչական և գիտական աշխատանքի գայթակղության բարձրացում, ուսուցիչների, դասախոսների, գիտակրթական ոլորտի աշխատակիցների սոցիալական դերի բարձրացում:
5. Հանրության անհատական և կոլեկտիվ մակարդակում իրավաքաղաքական և ընդհանրապես՝ մշակութային հասունության մակարդակի կտրուկ բարձրացմանն ուղղված մշակութային քաղաքականության և մարտավարության գործարկում, շարունակական բարձրացում, ցածր սոցիալական, իրավամերժ մշակույթի դրսևորումների վերացմանը ուղղված քաղաքականության մշակում և իրականացում:
6. Ազգային և համամարդկային արվեստի ու մշակույթի զարգացման խթանման պետական քաղաքականության գործարկում:

Սոցիալ-տնտեսական միջավայր

1. ՀՀ բոլոր ռեսուրսների ամբողջական վերագնահատում և գույքագրում: Օրենսդրական դաշտի գույքագրում և աստիճանաբար պարզեցում և արդիականացում:
2. Արտաքին և տեղական ներդրումների խրախուսման քաղաքականության մշակում և ներդրում: Ներդրողների հետ «մեկ պատուհան» սկզբունքով աշխատող կառույցների ձևավորում:
3. Բանկային, ֆինանսական և ապահովագրական ոլորտներում նոր տեխնոլոգիաների ներդրում, այդ կառույցների ներդրումային գործունեության խրախուսում:
4. Հարկային համակարգի երկարաժամկետ վստահության ամրապնդման և պարբերական փոփոխությունները նվազեցնելու նպատակով՝ Հարկային օրենսգրքին Սահմանադրական օրենքի կարգավիճակի տրամադրում, հարկային օրենսդրության հստակեցում, կիրառումն ապահովող համակարգերի ձևավորում:
5. Թոշակների բարձրացմանը զուգահեռ թոշակառուների համար պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրում: Թոշակների բնեռացման կրճատում: Կուտակային կենսաթոշակային առկա համակարգի էական բարելավում:
6. Ընտանեկան նպաստների համակարգում երեխաներին ուղղված արտոնությունների տրամադրում՝ մանկական քարտերի ներդրում,

մանկապարտեզներից, կրթական հաստատություններից անվճար օգտվելու իրավունք:

7. Նպաստառուների աշխատանքը խրախուսելու նպատակով ժամանակավոր արտոնությունների տրամադրում՝ եկամտային հարկի վերադարձի տեսքով:
8. Բազմազավակ ընտանիքների մասին օրենքի ընդունում՝ չափելի արտոնությունների տրամադրման նպատակով:
9. Աշխատանքային հաշտարարի, աշխատողների և գործարարների իրավունքների ու շահերի պաշտպանի ինստիտուտի ներդրում:
10. Տեղական ղեղերի արտադրության՝ ԱԱՀ-ից ազատում, առողջապահության ոլորտում հարկային քաղաքականության արդիականացում:
11. Սկսնակ գործարարների համար «Սկսիր Հայաստանում» պետական աջակցության ծրագրի ներդրում (start up program):
12. Կապիտալի շուկայի ակտիվացման նպատակով այդ ոլորտի հետ կապված օրենսդրական դաշտի, կորպորատիվ իրավունքի հստակեցում, արժեթղթերի շուկայի զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ստեղծում:
13. Գյուղատնտեսական ոլորտում ապահովագրության համակարգի ներդրում:
14. «Կանաչ» տնտեսության զարգացում, Էկո ոլորտում ներդրումների խրախուսում, արտոնությունների տրամադրում:
15. Գյուղատնտեսության ոլորտում ագրո-արդյունաբերական կլաստերների ձևավորում, ստանդարտացման համակարգերի ներդրում: «Հողից մինչև վաճառասարահ» սկզբունքի կիրառում, արդիական տեխնոլոգիաների ներդրում:
16. Գյուղատնտեսական փոքր արտադրությունների խրախուսում, մասնավորապես՝ գինեգործության, պահածոյագործության ոլորտներում: Արտադրության ոլորտում ներգրավված ՓՄՁ ընկերություններին պետական ֆինանսական աջակցության տրամադրում: ՓՄՁ արտահանող ընկերություններին աջակցության տրամադրում՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման և այլ գործիքների միջոցով:
17. ՓՄՁ աջակցության և սոցիալական բևեռացման կրճատման նպատակով՝ գազի և էլեկտրաէներգիայի սակագների տարբերակված, պրոգրեսիվ համակարգի սահմանում:
18. Հայաստանում հատուկ տնտեսական գոտիների (ազատ տնտեսական գոտիներ, արդյունաբերական գոտիներ) գործունեության նոր հայեցակարգի մշակում, համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում:
19. Տնտեսությունում կառավարման և որակի ապահովման միջազգային ստանդարտների ներդրում և կիրառում:

Քաղաքական և պետական կառավարման միջավայր

1. Արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում, այդ համակարգում կառավարման և հակակոռուպցիոն ստանդարտների ներդրում և կիրառում:
2. Կոռուպցիան անհանդուրժող համատարած միջավայրի ձևավորում:

3. Կադրային պետական քաղաքականության իրականացում՝ հիմնված գիտելիքի, մասնագիտական հմտության, փորձառության, բարոյական կերպարի և կարգապահության վրա:
4. Կառավարության կառուցվածքի փոփոխություն և սուպերվարչապետական (գերկենտրոնացված իշխանության) համակարգի վերացում:
5. Քաղաքական համակարգի առողջացմանն ուղղված ինստիտուցիոնալ և մշակութային գործողությունների իրականացում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական զարգացման հիման վրա:
6. Սահմանադրական փոփոխությունների նախաձեռնում՝ հիմնված բացառապես մասնագիտական աշխատանքի և քաղաքական շահերի սպասարկումը բացառելու սկզբունքի վրա:
7. Ընտրական օրենսդրության վերափոխում՝ հանրության քաղաքական ներուժի բացահայտման և պետականաշինության գործում գործուն կառուցակարգեր ներդնելու տրամաբանությամբ:
8. Պետական կառավարման և պետական ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով համալիր թվայնացման գործարկում:
9. «ՏԻՄ մասին» օրենքում փոփոխություններ՝ որոշ համայնքների համար, ըստ անհրաժեշտության՝ տեղական կառավարման տարբերակված մոդելներ կիրառելու նպատակով:
10. Տարածքների համաչափ զարգացման նպատակով պետական բյուջեից համայնքներին տրվող ֆինանսավորում ոչ միայն բնակչության թվի, այլև աղքատության և այլ գործոնների հաշվարկով:

Դատաիրավական միջավայր

11. Արդարադատության համակարգի արմատական վերափոխում, դատական իշխանությունում և իրավապահ համակարգում լավագույն կադրերի ներգրավման համար բարենպաստ միջավայրի ձևավորում, աշխատանքի որակի և վեճերի լուծման արդյունավետության բարձրացում:
12. Դատարանների ծանրաբեռնվածությունը թուլացնելու նպատակով դատավորների քանակի, դատարվորների աշխատակազմի քանակի ավելացում, վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգերի զարգացում:
13. Վարչարարության կազմակերպում և զարգացում այնպես, որ վեճերի զգալի մասը լուծվի վարչական կարգով, այլ ոչ թե դատական:
14. Իրավապահ մարմիններում՝ ոստիկանություն, հատուկ ծառայություններ, քննչական մարմիններ, դատախազություն վերափոխումների իրականացում՝ «արժանապատիվ ծառայող - արդյունավետ աշխատանք» հայեցակարգի շրջանակներում:
15. Կոռուպցիայի բոլոր դրսևորումների՝ կաշառակերության, նեպոտիզմի և ֆավորիտիզմի դեմ համակարգային անհաշտ պայքար:

I. ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Մարդու արժանապատիվ կյանքը բարձրագույն արժեք է և այն երաշխավորելն ու ապահովելը հասարակության և պետության գերագույն պատասխանատվությունն է: Այս պատասխանատվության արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ձևավորել այնպիսի միջավայր, որը կբացառի մարդու, հասարակության և պետության անվտանգությանը սպառնացող ցանկացած անպատիժ ոտնձգություն:

Այսպիսի անվտանգային միջավայր ձևավորելու համար «Լուսավոր Չայաստան» կուսակցությունը՝ որպես անփոխարինելի ռեսուրս է դիտարկում քանակապես և որակապես ավելացող այն հանրությունը, որը կունենա արտաքին և ներքին մարտահրավերների նկատմամբ անհրաժեշտ և բավարար դիմադրողականություն, հոգևոր-մշակութային, տնտեսական, սոցիալ-քաղաքական և պետաիրավական կայուն զարգացման համար անընդհատ աճող ներուժ: Միայն այս ռեսուրսի պահպանմամբ և անընդհատ զարգացմամբ է հնարավոր ապահովել և երաշխավորել ազգի և հասարակության երջանիկ հարատևությունը:

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը անվտանգային միջավայրի կառուցման հայեցակարգ է դիտարկում եռաստիճան անվտանգային միջավայրի հայեցակարգը, որի նպատակն է մարդու, հասարակության և պետության անվտանգության պատշաճ և անհրաժեշտ երաշխավորումն ու ապահովումը:

Անվտանգային հիմունքներ

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը Չայաստանի Չանրապետության անվտանգության ապահովման համակարգը կազմավորելիս հիմնվում է հետևյալ գործոնների վրա՝

1. Չայաստանի դեմ սանձազերծված պատերազմներն ունենալու են ոչ թե տարածքային վեճեր լուծելու, այլ Չայաստանի Չանրապետության՝ որպես ինքնուրույն սուբյեկտի վերացման և հայ ժողովրդի բնաջնջման նպատակ:
2. Չաշվի առնելով Չայաստանի տարածքի փոքրությունը (ռազմավարական և օպերատիվ խորքի բացակայությունը), ռեսուրսների սահմանափակվածությունը, դեպի ծով ելք չունենալը և հակառակորդի

քանակական գերազանցությունը՝ Հայաստանի համար անհնար կլինի վարել տևական պատերազմ և հաջողել:

3. Հայաստանը հակառակորդների դեմ՝ ոչ պատերազմական ժամանակ, պետք է կիրառի պայքարի ասիմետրիկ և հիբրիդային մեթոդներ՝ կանխելու հնարավոր ռազմական գործողությունները Հայաստանի Հանրապետության դեմ:
4. Հայաստանի համար անվտանգության ապահովման առաջնահերթություն է զարգացնել և խորացնել անվտանգային համագործակցությունը ռազմավարական գործընկերների հետ և ստեղծել նոր ռազմավարական համագործակցությունների հնարավորություններ:
5. Հարատև անվտանգության և առաջանցիկ զարգացման համար կարևոր է, որ Հայաստանը լինի աշխարհի բոլոր հայերի պետությունը, հայության երազանքների և նպատակների իրականացման կիզակետը: Առաջնային է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու և աշխարհում ապրող յուրաքանչյուր հայի համար ստեղծել հնարավորություն, գործիքակազմ և շարժառիթ, որպեսզի նա իր կեսագործունեության ողջ ընթացքում ցանկանա և կարողանա ծառայել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը և զարգացմանը:
6. Հայաստանում կրթությունը, գիտությունը, ենթակառուցվածքները կազմակերպվում և իրականացվում են՝ միտված պատրաստելու հանրություն և տնտեսություն՝ ունակ դիմակայելու այսօրվա և վաղվա երևացող և աներևույթ մարտահրավերներին:
7. Պետական համակարգի արդյունավետ կառավարումը, իշխանության մարմինների միմյանց փոխզսպելու և վերահսկելու գործուն համակարգերի ներդրումը դիտարկվում է որպես Հայաստանի Հանրապետության անվտանգության և հարատև զարգացման կարևոր բաղադրիչ:
8. Հայաստանի Հանրապետությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, որպեսզի ողջ մարդակենտրոն հասարակության գաղափարախոսությունը կրող մարդկությունը դառնա Հայաստանի Հանրապետության, ՀՀ ժողովրդի և աշխարհասփյուռ հայության ազնիվ գործընկերը և անվտանգության երաշխավորը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Ունենալ արտաքին և ներքին մարտահրավերների նկատմամբ դիմադրողականության, տնտեսական և մշակութային, սոցիալ-քաղաքական և պետաիրավական կայուն զարագացման համար բավարար ներուժ ունեցող և ազգի հարատևությունը երաշխավորող քանակապես ավելացող հանրություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում ծնելիությունը խրախուսելու նպատակով անհրաժեշտ են կառավարության գործուն քայլերը՝ ապագայի նկատմամբ երիտասարդ ընտանիքի վստահությունը մեծացնելու, ինչպես նաև աշխատող մայրերի համար լրացուցիչ խթաններ ստեղծելու համար: Մասնավորապես, նպատակահարմար է՝

1. աշխատող մայրերի աշխատավարձից պահվող եկամտային հարկը հաշվարկել նվազ դրույքաչափով՝ կախված անչափահաս երեխաների քանակից.
2. ներդնել մայրական կապիտալի նոր համակարգ, որի համաձայն երեխայի ծննդից հետո կուտակային խնայողական բանկային հաշվի վրա պետության կողմից կդրվի մայր գումար, որը կուտակվող տոկոսների հետ միասին կօգտագործվի երեխայի 18 տարին լրանալուց կամ դպրոցը ավարտելուց հետո՝ ուսման վարձի վճարման, բնակարան ձեռք բերելու, ամուսնության կամ այլ կոնկրետ նպատակներով: Այս համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն թույլ կտա մայր գումարը 18 տարիների ընթացքում մեծացնել 3-5 անգամ՝ կախված բանկային ավանդի տոկոսից.
3. երեխաներ չունեցող զույգերին համապատասխան բուժում և արհեստական բեղմնավորում իրականացնել պետպատվերի շրջանակում:
4. Անվճար և արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկն ընդլայնել՝ ծրագրում ներառելով նաև ինչպես փաստացի ամուսնական կյանքով ապրող, բայց ԿԳԱԿ-ում դեռևս չգրանցված զույգերին, այնպես էլ ինքնաբավ միայնակ կանանց, ովքեր ցանկություն կհայտնեն այդ ճանապարհով երեխա ունենալ:
5. Միայնակ մայրերի համար սահմանել պետական աջակցության ծրագրեր:

6. ՀՀ բոլոր համայնք-բնակավայրերում առկա մանկապարտեզները դարձնել անվճար:
7. Անվճար մանկապարտեզների հիմնում սահմանամերձ բնակավայրերում:
8. Ավելացնել արտոնությունները բազմազավակ ընտանիքների համար՝ 4 և ավելի երեխաների դեպքում կոմունալ վարձավճարների ամբողջական փոխհատուցում, ինչպես նաև առևտրի կենտրոններից առևտուր կատարելու համար տրամադրել հագուստի և սննդի կտրոններ:
9. 4 և ավելի երեխա ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքների համար իրականացնել բացարձակ անվճար բուժօգնություն և պրոթեզավորում՝ անհրաժեշտության դեպքում:
10. Երեխայի կյանքի կազմակերպման և կանխատեսելիության մակարդակի բարձրացման համար իրականացնել ծնողներին աջակցության պետական և մասնավոր-պետական համագործակցության խթանիչ ծրագրեր:
11. Այս բնագավառի քաղաքականության մեջ կիրառել հետևյալ բանաձևը՝ **«որքան շատ երեխա, այնքան քիչ ռեսուրսային (ժամանակ, ֆինանսներ և այլն) ծանրաբեռնվածություն ծնողների վրա»:**

ԲԱՆԱԿ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Ձևավորել հայ ազգի և հայկական պետականության անվտանգությունն ու հարատևությունը երաշխավորող, դինամիկ զարգացող ու կատարելագործվող զինված ուժեր, անվտանգության ինստիտուցիոնալ այլ մարմիններ, որոնք ունակ են դիմագրավել արտաքին և ներքին բոլոր հնարավոր ռազմական և անվտանգային այլ մարտահրավերներին՝ ապահովելով ազգային արժանապատվությունը:

ԱՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Զինված ուժեր (Բանակ)

Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

ՀՀ ՁՈւ-ում օր առաջ լուծում պահանջող հիմնախնդիրներն են՝

- ՀՀ նոր ռազմական դոկտրինայի մշակում և արդյունավետ ներդրում
- Չինված Ուժերում զորքերի, կրակի և հետախուզության կառավարման միասնական համակարգի ներդրում,
- Չինվորական ծառայության գրավչության բարձրացում, ինտելեկտուալ կադրերի ներգրավում, ուսման որակի շեշտակի բարելավում,
- Արդյունավետ կադրային քաղաքականության վարում,
- Չինծառայողների զինվորական, ֆիզիկական և ինտելեկտուալ պատրաստության և զարգացման ծրագրերի վերանայում/ներդրում:
- Չինված ուժերում բարեփոխումների նախագծում՝ հիմնված ռազմական գիտությունների և գիտական հետազոտությունների վրա:
- Չորավարժությունների անցկացման որակական փոփոխություններ՝ մաքսիմալ մոտեցված պատերազմական վիճակին, այդ թվում գործողությունների իրականացում՝ համապատասխան ռազմական փաստաթղթերի, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերի փոփոխությունների նախաձեռնում,
- Ռազմական հետախուզական մարմինների կարողությունների հզորացում և առաքելության հստակեցում:
- Գաղտնիության ռեժիմի հստակեցում և պատասխանատվության բարձրացում,
- Պահեստազորի և կամավորների՝ մարտական գործողություններում ներգրավման հստակ մեխանիզմների ներդրում/բարելավում,
- Մարտական դիրքերի կահավորման, մատակարարման երթուղիների և մեխանիզմների բարելավում,
- Սպառազինության համալրման պլանների սահմանում՝ հիմնված ՀՀ ռազմական առաջնահերթությունների վրա, ապահովելով հնարավորություն դինամիկ փոփոխության՝ կախված հակառակորդի սպառազինության ձեռքբերման գործընթացներից,
- Ռազմաարդյունաբերության նոր հայեցակարգի, ռազմավարության մշակում, ոլորտի զարգացմանն ուղղված ռեսուրսների աղբյուրների հստակեցում, ճանապարհային քարտեզի ամրագրում, ժամկետների և քայլերի

արդյունավետության հետ կապված լրջագույն պատասխանատվության սահմանում,

- Չինվորական հանցագործությունների համար նախատեսված քրեական պատասխանատվության կտրուկ խստացում:

Չինված ուժերի զարգացման հայեցակարգը

Ելնելով ՀՀ առջև ծառայած մարտահրավերներից և օր առաջ լուծում պահանջող խնդիրներից, ԼՂԿ-ն առաջարկում է ՀՀ ՉՈՒ զարգացման հետևյալ հայեցակարգը.

ՀՀ զինված ուժերը բաղկացած են ծառայության հետևյալ տեսակներից .

- Պրոֆեսիոնալ զինվորական ծառայություն,
- Ռազմական հետախուզության և վերլուծական ծառայություն,
- Պարտադիր ժամկետային ծառայություն,
- Հատուկ մասնագիտական ծառայություն,
- Ակտիվ պահեստազոր

Պրոֆեսիոնալ զինվորական ծառայություն

Չինված Ուժերի հիմնական կազմը պրոֆեսիոնալ զինվորական ստորաբաժանումներն են:

Հիմնվելով այն պնդման վրա, որ միայն որակական գերազանցությամբ ՀՀ ՉՈՒ-ն կկարողանա առավելության հասնել հակառակորդի նկատմամբ՝ առաջնահերթություն է դառնում զինվորական ծառայության գրավչության բարձրացումը՝ նպատակ ունենալով զինված ուժերում ներգրավել ազգի սերուցքը: Այս նպատակին հասնելու համար կարևոր են ինչպես սոցիալական երաշխիքների ներդրումը, զինծառայողների հանրային հեղինակության բարձրացումը, այնպես էլ դպրոցական ուսումնական ծրագրում զինվորական ծառայության հիմնադրույթների ներդրումն ու սահուն մեխանիզմների ստեղծումը՝ պարտադիր ժամկետային զինծառայությունից պրոֆեսիոնալ զինծառայության անցման համար:

Չինծառայողների համար առաջարկվում են հետևյալ սոցիալական երաշխիքները.

- Ընտանիքի անդամների համար որակյալ բժշկական ապահովագրության տրամադրում:
- Ընտանիքի անդամների համար կրթաթոշակի տրամադրում:
- Հանգստի կազմակերպման արտոնություններ:

- Չինվորական ծառայության ավարտից հետո պետական համակարգում կառավարման հմտություններ պահանջող հաստիքներում առաջնահերթ նշանակման իրավունքի ապահովում,
- Կուտակային հիփոթեքային համակարգի ներդրում: Սույն համակարգի մասնակիցներն են այն զինծառայողները, որոնք անցնում են պայմանագրային զինծառայություն և ընդգրկված են մասնակիցների ռեեստրում:
Կուտակային հիփոթեքային համակարգի մասնակցի անունով բացվում է անվանական կուտակային հաշիվ, որտեղ հաշվառվում են՝ կուտակային վճարները, այն է՝ ամենամսյա կտրվածքով պետական բյուջեից հատկացվող դրամական միջոցները, կուտակային միջոցների ներդրումից ստացվող եկամուտները (տոկոսները):
- Ռազմական ուսումնական հաստատությունները գերազանցությամբ ավարտողների համար արտոնությունների տրամադրում:
- Չինվորական թոշակների բարձրացում:
- Չինվորական շքանշանների (մեդալների) տրամադրման հստակ չափանիշների սահմանում և պատվո վճարների սահմանում:
- Չինծառայողների վարձատրողության հետևողական և պարբերական բարձրացում:

Ռազմական հետախուզության և վերլուծական ծառայություն

Չիված ուժերում հետախուզական, վերլուծական, հետազոտական, կանխատեսման և պլանավորման կենտրոնի վերակազմակերպումն ու պատշաճ գործիքակազմով ապահովում է դառնում է առաջնահերթություն 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ անվտանգային համակարգ ունենալու համար:

Պարտադիր ժամկետային ծառայություն

18 տարին լրացած արական սեռի ՀՀ քաղաքացիները զորակոչվում են ծառայության ՀՀ զինված ուժերում: Չինվորական ծառայության հիմնական սկզբունքներն են .

- o Նպաստել զինծառայողների զարգացմանը
- o Խորացնել զինծառայողների հայրենաճանաչողական գիտելիքները
- o Խրախուսել ժամկետային զինծառայողների ներգավումը պրոֆեսիանալ ստորաբաժանումներում՝ լավագույնս կիրառելով նրանց մասնագիտական հմտությունները:

Չորակոչված ժամկետային գինձառայողներն իրենց ծառայությունն իրականացնում են ռեզերվային/ուսումնական գործառնություններում:

Հատուկ մասնագիտական ստորաբաժանումներ

ՀՀ ՉՈՒ Հատուկ օպերացիաների, տեղեկատվական և հոգեբանական պայքարի կազմավորումները ՀՀ ՉՈՒ ոչ գինվորական կամ համակցված՝ գինվորական և քաղաքացիական կազմով մասնագիտական ստորաբաժանումներ են, որոնց խնդիրն է իրականացնել հակառակորդների ճնշման և հաղթահարման գործողություններ՝ մարտական և ոչ մարտական ոլորտներում: Սույն ստորաբաժանումներում կարող են ներգրավվել համապատասխան մասնագիտական գիտելիքներ ունեցող պարտադիր գինվորական ծառայություն անցած ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև մասնագիտական պարտադիր ժամկետային գինձառայությունն ավարտած քաղաքացիները՝ անմիջապես:

18 տարին լրացած արական սեռի ՀՀ քաղաքացիներին, որոնք ընդունվել են ՀՀ հավատարմագրված ԲՈՒՀ-եր կարող են անցնել մասնագիտական ներգրավվել ծառայության հատուկ մասնագիտական ստորաբաժանումներում, եթե բավարարում են լիազոր մարմնի սահմանած պահանջները և նրա հետ կնքում են քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր: Սույն քաղաքացիները իրենց ուսումնառությունը շարունակում են ՀՀ ՊՆ և ՀՀ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների համատեղ ուսումնական ծրագրով՝ ազգային գիտահետազոտական հատուկ կենտրոններում: Ծրագրի պարտադիր բաղադրիչ է ռազմական պատրաստությունը:

Սույն ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության Չինված ուժերում առաջադեմ տեխնոլոգիաների և նորագույն գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմանը, ինչպես նաև ստեղծել հարթակ՝ երիտասարդ գիտնականների գիտական ձեռքբերումների և շարունակական զարգացման համար: Ծրագրի մասնակիցները, շարունակելով համարվել ընթացիկ ուսումնական հաստատության ուսանող, ստանում են համապատասխան սպայական կոչում և աշխատանքի անցնում պաշտպանական գերատեսչության մասնագիտական ստորաբաժանումներում՝ պայմանագրային հիմունքներով:

Ակտիվ պահեստազոր

Պարտադիր ժամկետային գինվորական ծառայությունն ավարտած քաղաքացիները կցագրվում են պահեստազորում: Պահեստազորում կցագրված

քաղաքացիները պարտավոր են տարեկան մեկ երկու անգամ մասնակցել զորավարժությունների:

Պահեստազորում ընդգրկված քաղաքացիները՝ կամավորության սկզբունքով, կարող են ընդգրկվել ակտիվ պահեստազորում: Ակտիվ պահեստազորում ընդգրկված քաղաքացիները մասնակցում են զորահավաքների և ըստ անհրաժեշտության ներգրավվում են զինվորական ծառայությամբ պայմանավորված առաջանդրանքներում: Չորավարժություններն իրականացվում են հատուկ ուսումնական զորամասերում: Սույն ժամանակահատվածի համար քաղաքացիները ստանում են վարձատրություն՝ պահպանելով իրենց աշխատատեղը և աշխատավարձը:

Դպրոցական նախնական զինվորական պատրաստություն

15 տարին լրացած ՀՀ քաղաքացիները պարտադիր մասնակցում են ամառային և ձմեռային մեկամսյա զինվորական բանակումների, որոնց ընթացքում սովորում են ինքնապաշտպանական մարտարվեստ, առաջին բուժօգնություն, քաղաքացիական պաշտպանություն, ռազմավարություն, զենքի կիրառություն, կիբեր անվտանգություն և այլն: Բանակումները պետք է հազեցած լինեն անհրաժեշտ սպառազինությամբ, զին և տեխ հազեցվածությամբ: Վերոհիշյալ քաղաքացիները պետք է ծանոթանան ժամանակակից ռազմաարդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների նվաճումներին:

ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային անվտանգության ծառայության հետախուզական մարմինների, ներքին անվտանգության և Անվտանգության խորհրդին վերաբերող նոր ռազմավարական հայեցակարգի մշակում, որն իր հատուկ նշանակությամբ և ֆունկցիոնալ գաղտնիության պատճառով չի կարող ներառվել հանրությանը հասանելի կուսակցության ծրագրում:

ԱՐՑԱԽ

Հաշվի առնելով, որ Արցախի հիմնախնդրի կարգավորման առկա կառուցակարգերը ձախողվել են, և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից միջազգային

իրավունքի կոպիտ խախտմամբ ուժի գործադրման և ագրեսիայի արդյունքում Արցախի Յանրապետության տարածքների մեծ մասը բռնազավթվել է, կատարվել են պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ առաջացել է հրատապ անհրաժեշտություն վերանայել Արցախյան հիմնահարցի լուծման մարտավարությունը:

Արցախյան հիմնահարցի լուծման և Յայաստանի Յանրապետության անվտանգության գլխավոր երաշխիքը Յայաստանի հզոր տնտեսությունն է և կրթադաստիարակչական ու հոգևոր զարգացում ապրող հանրությունը: Ունենալով հզոր տնտեսություն և պատրաստ հանրությունուն՝ Յայաստանը կարող է առավել ինքնավստահ և ուժեղ դիրքերից հանդես գալ դիվանագիտության ոլորտում, հարկ եղած դեպքում՝ նաև ռազմական հակամարտության վերսկսման պայմաններում: Ընդ որում՝ Արցախի հիմնախնդիրը կարելի է լուծել միմիայն առաջավոր, դիվերսիֆիկացված, իրավունքի գերակայության պայմաններում զարգացող տնտեսություն ու հոգեբանորեն զարգացող հանրություն կառուցելու միջոցով:

Սատարում ենք Արցախյան խնդրի արդար և խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը: Չուզահեռաբար մտադիր ենք ավելացնել մեր պաշտպանական և այլ ռազմական հզորությունները՝ վերականգնելով տարածաշրջանային խախտված ռազմական հավասարակշռությունը: Արցախի քաղաքական և տնտեսական զարգացումը պետք է դառնա Յայաստանի Յանրապետության կարևորագույն առաջնահերթություն:

ՆՊԱՏԱԿ

Արցախյան հիմնահարցի լուծումը մեկն է՝ 1990թ-ի օգոստոսի 23-ին ընդունված Յայաստանի Յանրապետության Անկախության հռչակագրի կենսագործումը, այն է՝ Արցախն՝ ինքնորոշման հիման վրա ՄԻԱՆՈՒՄ Է Մայր Յայրենիքին՝ Յայաստանի Յանրապետությանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ

- 1.1. Ուժեղ Յայաստանն Արցախի հակամարտության հայանպաստ լուծման գրավական:
- 1.2. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի կենսագործում՝ «Անկախացում-Միացում» կամ «Միացում» ճանապարհով:

- 1.3. ԵԱՅԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքների վերականգնում և Արցախի շահերի պատշաճ ներկայացում:
- 1.4. ԶՅ և ԱՅ բանակի վերակազմակերպում և ռազմական արդյունաբերության զարգացում:
- 1.5. Ակտիվ պատրաստություն հակառակորդների հնարավոր հարձակումները կանխելու, դրանց դիմագրավելու, հակահարձակման անցնելու ուղղությամբ:
- 1.6. Արցախի Զանրապետության տարածքային ամբողջականության վերականգնում:
- 1.7. Արցախի Զանրապետության և Զայաստանի Զանրապետության արտաքին քաղաքականությունների ներդաշնակեցում:

2. ԻՐԱՎԱԿԱՆ

- 2.1. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի կենսագործման և Արցախյան հակամարտության հայանպաստ լուծման համար անհրաժեշտ միջազգային իրավական գործիքների կիրառում:
- 2.2. Միջազգային իրավասու կազմակերպություններում ու վեհաժողովներում հայանպաստ բանաձևերի ընդունմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների կատարում:
- 2.3. Միջազգային մակարդակով ազդեցիկ պետությունների և կազմակերպությունների մոտ Արցախի հարցով հայանպաստ դիրքորոշում ձևավորելունն ուղղված անհրաժեշտ իրավական, դատական, գիտական միջոցառումների իրականացում:
- 2.4. Ադրբեջանի կողմից տարվող հայատյաց քաղաքականության դեմ միջազգային իրավական (դատական) գործընթացների զարգացում:
- 2.5. Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության և առանձին գինժառայողների կողմից կատարած պատերազմական հանցագործությունների հիմքով միջազգային և ազգային մակարդակներում քրեաիրավական գործընթացների նախաձեռնում:
- 2.6. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի դեմ ագրեսիայի շրջանակներում ներգրաված վարձկանների հիմքով նրանց դեմ

միջազգային իրավական (դատական) գործընթացների նախաձեռնում:

- 2.7. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ահաբեկչության ֆինանսավորման հիմքով նրանց դեմ միջազգային իրավական (դատական) գործընթացների նախաձեռնում:
- 2.8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Ադրբեջանի և Թուրքիայի դեմ հայցերի ներկայացում՝ Արցախում մարդու կյանքի իրավունքի ոտնահարման, խոշտանգումների իրականացման, սեփականության ոչնչացման ու սեփականությունից զրկելու, քաղաքացիական անձանց, ռազմագերիներին ազատազրկելու ու որպես պատանդ պահելու հիմքերով:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

- 3.1. Սոցիալական նվազագույն կենսապայմաններն ապահովելուց զատ, Արցախում պետք է առկա լինի տնտեսական գործունեություն իրականացնելու ամենալայն հնարավորությունները:
- 3.2. Հայաստանի և Արցախի սոցիալ տնտեսական միջավայրի, ենթակառուցվածքների ամբողջական ինտեգրացիա:

4. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 4.1. Արցախի բնակչության քանակի շարունակական ավելացում

5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

- 5.1. Մշակութային փոխկապվածության զարգացում և զարթոնք

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐ

Ունենալ ֆիզիկապես առողջ, ակտիվ, առանց վերարտադրողական խնդիրների, երկարակյաց քաղաքացիներ և հանրություն:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հիվանդության դեմ պայքարող բժշկությունից դեպի կանխարգելիչ առողջապահություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ապահովել COVID-19-ի և դրա հետևանքների դեմ խելամիտ, արդյունավետ և համընդգրկուն պայքար:
2. Ներդնել որակյալ, արդյունավետ, հասանելի և թափանցիկ առողջապահության համակարգ:
3. Անվճար բժշկական օգնություն տրամադրել միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ, պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:
4. Կարևոր ենք համարում բժշկական ծառայությունների բարձր որակի ապահովումը, հասանելիությունը, հիվանդությունների մշտադիտարկումը և վաղաժամկետ կանխարգելումը, առողջ ապրելակերպը, պետական առողջապահական ծախսերի նպատակայնության բարձրացումը, Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրումը, առողջապահական ծառայությունների շուկայական և մրցակցային գնագոյացումը, լաբորատոր համակարգի զարգացումը, պետական բյուջետային միջոցների բաշխման նպատակային, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմների ապահովումը, մարզային հիվանդանոցների արդիականացումը, առողջապահական համակարգի կողմից նոր ծառայությունների մատուցումը, համակարգի կարողությունների զարգացումը, բժշկական ծառայությունների արտահանումը (բժշկական տուրիզմ), ՀՀ-ում նեղ մասնագիտական ծառայությունների խմբերի (clusters) և որակական զարգացման ազգային ծրագրերի ներդրումը, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, վահանաձև գեղձի և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունների ներդրումը:

5. ՀՀ-ում առողջության ապահովագրության համակարգի ներդրման ծրագրային դրույթներ
- 5.1. Ծրագրի նպատակն է պետության առանցքային սոցիալական խնդրի լուծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների առողջության պահպանման ու բարելավման ապահովումը:
- 5.2. Ծրագրի իրականացումը կապահովի հետևյալ դրական զարգացումները.
- Համակարգի շահառու հանդիսացող քաղաքացիները կապահովագրվեն առողջական վիճակի վատթարացման հետևանքով անկանխատեսելի ֆինանսական ռիսկերից,
 - Կբարձրանա մասնավոր և պետական հատվածների կողմից առողջապահության ոլորտում իրականացվող ծախսերի արդյունավետությունը և հասցեականությունը,
 - Կբարելավվի առողջապահական ծառայությունների որակը առողջապահության ոլորտում ստանդարտների և չափանիշների պահպանման խթանման միջոցով:
 - Կապահովվի բնակչության տարեկան պարտադիր բուժզննում անցնելը, ինչը չափազանց կարևոր է վաղ շրջանում հիվանդության հայտնաբերման կամ կանխարգելման համար:
- 5.3. Ծրագրեր և ակնկալվող արդյունքներ.
- Բուժման և բուժզննության հասանելիություն և որակ: Հայաստանի Հանրապետության ցանկացած համայնքի բնակիչ պետք է առավելագույն հնարավորություններով ստանա որակապես հավասար բժշկական ծառայություն և հասանելիություն, այսինքն մարզային հիվանդանոցները, պոլիկլինիկաները չպետք է զիջեն մայրաքաղաքային հիվանդանոցներին և պոլիկլինիկաներին, բացի առանձին մասնագիտացված բժշկական ուղղվածություններով հիվանդանոցների:
 - Ներդնել աշխարհում ամենարդյունավետ միջոցի՝ բժշկական ապահովագրության պետական համակարգը, որը հավասար մրցակցային պայմաններ կունենա մասնավոր կազմակերպությունների հետ և սոցիալապես անապահով

հատվածին հնարավորություն կտա համապատասխան բուժզննում և բուժում ստանալու:

- Հիվանդացության հետևանքով մահերի և հաշմանդամություն ձեռք բերելու դեպքերը հասցնել նվազագույնի:
- Ուսումնասիրելով և թվային վերլուծության ենթարկելով ամենաշատ մահացություն պատճառող հիվանդությունները, դրանց պատճառահետևանքային կապերը ի դերն հանելով, համատարած սկրինինգային ծրագրերի միջոցով բացահայտել հիվանդությունների թաքնված շրջանի քանակական և որակական բնութագրիչները, ինչն էլ հնարավորություն կտա ավելի հեշտ և քիչ ֆինանսներով արդյունքներ ունենալուն:
- Առանձնահատուկ ուշադրության արժանացնել և հետևողական ու մշակված քաղաքականություն վարել հասարակության լայն շերտերին առողջ ապրելակերպի անցման և այդ մշակույթի ձևավորման նպատակով: Սպորտի դերի մեծացում, հասարակությանը վնասակար սովորություններից ձերբազատում և այլն
- Պետական խիստ վերահսկողության տակ վերցնել սննդի անվտանգության խնդիրը, շուկայից աստիճանաբար հանել անորակ, արհեստական սննդային բաղադրիչներով պատրաստված սնունդը, ավելի բարձր չափանիշներ սահմանելով և դրանք խախտելու դեպքում առավել խիստ տուգանքներ նախատեսել:
- Պետական ճիշտ քաղաքականության վարման համար անչափ կարևոր է թվային տվյալներ ունենալ հասարակության հոգեվիճակի մասին: Հոգեբանական լարվածության(սթրես) մակարդակի, սթրեսածին երևույթների առաջացման, հետևանքների և ազդեցության գնահատման ճիշտ մոտեցման պարագայում կարող ենք խուսափել շատ հիվանդություններից, սակայն այս հանգամանքի վրա բավարար ուշադրություն չի դարձվում և անտեսվում է առողջապահական տեսանկյունից:

5.3.1. Ակնկալվող արդյունքներ

5.3.1.1. Կյանքի որակի և միջին տևողության անընդհատ և պարբերաբար բարձրացում

5.3.1.2. Հասանելիություն

- Հիվանդացության հետևանքով առաջացած բուժման ֆինանսական ծախսերի Էական նվազեցում (մեկ մարդու հաշվարկով միջին վիճակագրական ծախս) բժշկական ապահովագրության ներդրման միջոցով:
- Բժշկության արտահանում, որի արդյունքում ֆինանսական լուրջ ներհոսք կապահովվի և կբարձրանա երկրի վարկանիշը:
- Չարկ տալ բժշկական զբոսաշրջությանը:
- Օտարերկյա ուսանողների համար որակյալ ու մրցունակ կրթության ապահովման միջոցով Հայաստանը դարձնել տարածաշրջանում առաջատար (բժշկական կրթության արտահանում):
- Բժշկի հեղինակության և մասնագիտական կարողության բարձրացումը համակարգի շարժիչ ուժն է: Ակնկալվող արդյունքի կարող ենք հասնել հստակ չափորոշիչներ ներդնելով, արտասահմանում պետական հովանավորությամբ վերապատրաստում ստանալով, ոլորտը ազատականացնելով քաղաքականությունից, հավասար մրցակցություն ապահովելով, համարժեք վարձատրությամբ, բժշկական սխալի դեպքում պատասխանատվության արդարացի մեխանիզմներ մշակելով:
- Ստեղծել գրավիչ միջավայր մարզային հիվանդանոցներում աշխատանքի անցնելու համար:

ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲՆԱՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐ

Մարդու ֆիզիկական առողջության, մարդ-բնություն փոխկապվածության ներդաշնակ զարգացման, հանրության ու պետականության կայուն զարգացման

նպատակով բնական միջավայրի ձևավորում, զարգացում ու պահպանում: Բնական ռեսուրսների արդյունավետ շահագործում և արդար բաշխում:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Մարդը բնության շահագործողից դեպի բնության գործընկեր և բարեկամ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Երկրի երկարաժամկետ կայուն զարգացման կարևոր նախապայման և երաշխիք է հանդիսանում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը:
2. Անհրաժեշտ է բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը, նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու կյանքի և առողջության վրա բացասական ազդեցությունները, ապահովել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը կամ նվազեցումը, բնական ռեսուրսների համալիր կառավարումը և դրանց նկատմամբ վերահսկողությունը:
3. Կարևորում ենք նաև Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացումը, մթնոլորտային օդի պահպանությունը, կենսաբազմազանության պահպանությունը, անտառների ապօրինի հատումների կանխումը, թափոնների կառավարումը, շրջակա միջավայրի պահպանության նորարարական տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ներդրումը:
4. Անել ամեն ինչ արդյունավետ կառավարելու համար ՀՀ ջրային ռեսուրսները (կառուցել ջրամբարներ, օգտագործելով գերժամանակակից տեխնոլոգիաներ հնարավորին չափ խնայողաբար օգտագործել ջուրը):
5. Հատուկ ուշադրություն դարձնել անտառների պահպանմանը և նոր կանաչապատ տարածքների ստեղծմանը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Ապահովել ազատ միտք և կամք ձևավորելու մարդու իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ տեղեկատվական կառուցակարգեր՝ զերծ պահելով մարդուն միջոց, կեղծ տեղեկատվության գործիք ու զոհ դարձնելու արատավոր միջավայրից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կանոնակարգել տեղեկատվության տարածման և հանրությանը տեղեկատվության տրամադրման գործիքների, միջոցների և միջավայրերի գործունեությունը՝ կանխելով կեղծ, հանրային բարոյականության ու առողջության, ազգային անվտանգության դեմ ուղղված տեղեկատվության տարածումը, միաժամանակ պաշտպանելով ազատ մամուլի և խոսքի իրավունքը:

II. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐ

Գիտակցելով և հաշվի առնելով համամարդկային, միջազգային և տարածաշրջանային բնակլիմայական, առողջապահական, մարդասիրական, միջազգային իրավական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային հին և նոր մարտահրավերները, միջազգային բարոյ իրավիճակը և ուրվագծվող աշխարհաքաղաքական միտումները, գործող աշխարհակարգի ճգնաժամն ու դրա ծնած ռիսկերը, նոր աշխարհակարգի ձևավորման տեսիլքը՝ Հայաստանի Հանրապետությունն ու ժողովուրդը, ինչպես նաև աշխարհասփյուռ հայությունը պարտավոր են իրագործել երկրի կայուն անվտանգությունն ու զարգացումը երաշխավորող հավասարակշիռ, ճկուն և հեռատես արտաքին քաղաքականություն:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Պաշտպանողական, նեղ, միաշերտ դիվանագիտությունից դեպի գլոբալ համագործակցության բազմաշերտ արտաքին քաղաքականություն:

ՆՊԱՏԱԿ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը հետամուտ է լինելու, որ ՀՀ արտաքին քաղաքականությունն՝

- ապահովի երկրի, ՀՀ ժողովրդի և հայ մարդու անվտանգությունը և երաշխավորի տվյալ ոլորտում դիվանագիտական բաղկացուցչի արդյունավետ և բազմակողմանի կիրառելիությունը,
- իր ողջ գործիքակազմը և ռեսուրսները ծառայեցնի ՀՀ ինքնիշխանության, սահմանների ամբողջականությանն ու ազատությանը,
- իր ունեցած ողջ հնարավորություններով և ռեսուրսներով ապահովի ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացումը,
- իր ամենօրյա տքնաջան աշխատանքով երաշխավորի և ապահովի ՀՀ հեղինակության (պրեստիժի) կայուն և հետևողական բարձրացումը,

- իր նպաստը բերի հայ մշակույթի և արվեստի ողջ աշխարհում տարածման գործում, այդպիսով՝ հասանելի դարձնելով մարդկությանը հայ ժողովրդի պատմական և մշակութային ժառանգությունը
- իր լրջագույն լուծման ներդնել ՀՀ գիտության և կրթության սրընթաց զարգացման գործում:

ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է ջանք չխնայի հասնելու արցախյան հիմնախնդրի արդարացի և հարատև լուծմանը՝ իր ծրագրերն ու գործողությունները ներդաշնակեցնելով և միատեղելով Արցախի Հանրապետության համապատասխան ծառայությունների հետ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը վերը հիշատակված նպատակներից բացի ՀՀ արտաքին քաղաքական հիմնականատակ է հռչակում Հայաստանի Հանրապետության, ՀՀ ժողովրդի և աշխարհասփյուռ հայության ակտիվ և արգասաբեր մասնակցության ապահովումը համամարդկային մարտահրավերների դիմակայմանը, ինչպես նաև նոր, արդար և արդյունավետ «Արարող աշխարհակարգի» ձևավորման գործում:

Հայաստանի Հանրապետությունը կարող է իրականացնել հաջողված արտաքին քաղաքականություն միայն ներքին արդյունավետ տնտեսական և ժողովրդավարական քաղաքականության առկայության պարագայում:

«Լուսավոր Հայաստան»-ը հետամուտ է լինելու պետական կառավարման գործում ինստիտուտների, իրավունքի գերակայության, ժողովրդավարության միջազգային արդյունավետ փորձի և մեր ազգային լավագույն առանձնահատկությունների ու շահերի համադրությամբ պետության կառուցմանը:

Արտաքին քաղաքականության առանձին ուղղություններով աշխատանքի արդյունավետությունը պետք է բարձրացնել առավելագույն մակարդակի՝

Դիվանագիտական աշխատակազմ

- Ուժեղացնել դիվանագիտական կրթությունը Հայաստանում:
- Համալրել դիվանագիտական կորպուսը նոր կադրերով:
- Առկա լծակների, կառուցակարգերի, հարթակների և գործիքակազմի առավել պրոակտիվ և արդյունավետ կիրառում՝ ի նպաստ հայամետ որոշումների, բանաձևերի և ընդհանուր դիրքորոշման ձևավորման:

Արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի մշակում և ներդրում, որտեղ

- առանձնակի ուշադրություն կդարձվի ռազմավարական գործընկերության սկզբունքների հստակեցմանը և զարգացմանը,

- Հայաստան-ՌԴ հարաբերությունները կբերվեն որակական նոր մակարդակի՝ խորացնելով բոլոր տեսակի հարաբերությունները ռազմավարական գործընկերոջ հետ, կնախատեսվի նոր անվտանգային բնույթի պայմանագիր, կթարմացվի ՌԴ և ՀՀ միջև գործող իրավապայմանագրային ողջ հենքը: Կնախատեսվի Սյունիքի մարզում ռուսական նոր ռազմակայանի կայազորի տեղակայում, որը կապահովի Արցախում գտնվող խաղաղապահ ուժերի արդյունավետ գործունեությունը, կերաշխավորի Սյունիքի մարզի սահմանամերձ տարածքների, և ինչպես Հայաստանի, այնպես էլ ԵԱՏՄ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների անվտանգությունը:
- ԵՄ-ի հետ կհստակեցվի խորը և համապարփակ գործընկերային հարաբերությունները և կապահովվի դրանց շարունակական զարգացումը: Առավելագույն արդյունավետությամբ կօգտագործվի ԵՄ և ԵԽ-ի հետ SEPA-ի շրջանակներում առկա մեխանիզմները և գործիքակազմը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության: ԵՄ երկրների հետ կխորացվի սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտակրթական համատեղ ծրագրերի մշակումն ու իրագործումը:
- Հատուկ ուշադրություն կդարձվի ԱՄՆ-ի հետ գործընկերային հարաբերությունների հստակեցմանն ու շարունակական զարգացմանը, կշարունակվի համագործակցության զարգացումը տնտեսական, մշակութային և տարածաշրջանային զարգացման ծրագրի շրջանակներում:
- Անհրաժեշտ է է՛լ ավելի խորացնել բարեկամական հարաբերությունները Ֆրանսիայի հետ բոլոր հնարավոր ուղղություններով՝ կիրառելով բազմաշերտ արտաքին քաղաքականության ողջ գործիքակազմը:
- Կբացահայտվի Չինաստանի ժողովրդավարական Հանրապետության հետ գործընկերային հարաբերությունների ողջ ներուժը և կկատարվեն կոնկրետ արդյունավետ քայլեր այն հնարավորինս փոխշահավետ օգտագործելու համար: Հատուկ ուշադրություն կդարձվի համագործակցությանը՝ մեծ ենթակառուցվածքային ծրագրերի շրջանակներում,

- Իրանի Իսլամական Հանրապետության հետ հնարավորինս կխորացվի բարեկամական հարաբերությունները և կգտնվեն փոխշահավետ փոխգործակցության կարևոր նոր ուղղություններ,
- Վրաստանի Հանրապետության հետ կշարունակվեն և կխորացվեն բարեկամական հարաբերությունները, ինչը կնպաստի երկու հարևան-բարեկամ երկրների կայուն զարգացմանը,
- Մերձավոր Արևելքի երկրների հետ կնախատեսվի ներդրումային փոխշահավետ ծրագրերի իրականացում, մշակութային կապերի զարգացում և հարստացում: Նպատակ կդրվի ապահովել Մերձավոր Արևելքում հայկական ներկայացվածության մակարդակի ավելացումը:
- Արտաքին քաղաքական ակտիվություն կցուցաբերվի Հնդկաստանի հետ հարաբերությունների զարգացման գործում:

Արտաքին քաղաքականության հայեցակարգում հատուկ տեղ պետք է զբաղեցնեն Հայաստան-միջազգային կազմակերպություններ, Հայաստան-տարածաշրջանային կազմակերպություններ հարաբերությունների հստակեցումը և այդ հարաբերությունների ծառայեցնելը ի շահ Հայաստանի Հանրապետության, ՀՀ ժողովրդին և համայն հայությանը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀԱՊԿ, ԱՊՀ, ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ ներգրավվածության հստակեցմանը և ՀՀ մասնակցության արդյունավետության բարձրացմանը: Պետք է ակտիվացնել և ավելի արդյունավետ դարձնել ԵԱՀԿ շրջանակներում դիվանագիտական աշխատանքը: «Գործընկերություն հանուն խաղաղության շրջանակներում» շարունակել փոխշահավետ հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ:

ՀՀ արտաքին քաղաքականության նպատակներից պետք է լինի Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, միջազգային իրավունքի այլ իրավախախտումների համար միջազգային իրավական և անհրաժեշտ քաղաքական գործընթացների նախաձեռնումը և դրանց հետևողականորեն՝ մինչև տրամաբանական ավարտ հասցնելը:

Արտաքին քաղաքական խնդիրներից է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Թուրքիայի միջազգային պատասխանատվության իրավական գործընթացների նախաձեռնումը:

ՍՓՅՈՒՌՔ

ԳԱՂԱՓԱՐ

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները զարգացնել փոխակապվածության ու փոխօգնության համակարգված, արդյունավետ և անթերի աշխատող կառուցակարգի մակարդակ՝ ի շահ ազգային և պետական շահի:

Հայաստանն ու Սփյուռքը պետք է դառնան հայկական պետականությունը որպես միասնական առանցք ընկալող ցանցային ամբողջական համակարգ:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Բարերար սփյուռքահայից դեպի գործընկեր հայրենակից

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետևողական աշխատանքի արդյունքում հասնել նրան, որ աշխարհում ապրող միլիոնավոր հայերն իրենց նույնականացնեն հայկական պետության հետ:
2. Ներդնել ի շահ պետականության՝ Սփյուռքի մարդկային և մտավոր ներուժի օգտագործման գործուն կառուցակարգեր: Ֆինանսական աջակցությունից առավել Հայաստանի համար կարևոր է Սփյուռքի մարդկային ու մտավոր ներուժը:
3. Հայաստանի քաղաքական և տնտեսական արդիականացման գործում մեր սփյուռքահայ հայրենակիցները կարող են ունենալ վճռորոշ ազդեցություն իրենց բոլոր ռեսուրսներով, կուտակած փորձի փոխանակմամբ, նորարարական գաղափարներով և ուղղակի մասնակցությամբ:
4. Ընդ որում, Սփյուռքի կողմից նմանատիպ դիրքորոշումը պետք է դիտվի ոչ թե պարզապես օգնություն, այլ իրավունքի գերակայության ու հավասար հնարավորությունների պայմաններում սեփական հայրենիքում կատարված շահութաբեր ներդրում:
5. Հայաստանի Հանրապետությունը Սփյուռքի համար չպետք է լինի բեռ ու պարտավորվածություն, այլ պետք է լինի այն հայրենիքը, որը ոչ միայն հանդիսանում է աշխարհի ցանկացած կետում գտնվող հայի անվտանգության երաշխավորը, այլև նոր հնարավորությունների հորիզոններ բացողը:
6. Սփյուռքի ներկայացուցիչներին տրամադրել իրավական կարգավիճակ՝
 - Սփյուռքահայերի համար սահմանել պետական կառավարմանը և որոշումների կայացմանը մասնակցելու աստիճաններ՝ որոշ դեպքերում ընդհուպ մինչև ընտրական իրավունք:

- Հստակ և թափանցիկորեն վերահսկել սփյուռքի հետ աշխատանքի գործընթացը ամբողջ աշխարհում.
- Սփյուռքը՝ որպես ներդրումների և մարդկային ռեսուրսների մշտական աղբյուր.
- Սփյուռքը՝ որպես հայկական շահերի ուղղությամբ աշխատանք տանող փափուկ ուժ.
- Ստեղծել մեկ միասնական կառույց, որը կապող օղակ կհանդիսանա Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև:
- Լրջագույն խնդիր է հանդիսանում Սփյուռքում հայ մարդու ինքնության պահպանումը և այդ առումով պահանջվում է ՀՀ կողմից արդյունավետ հայեցակարգի մշակում և վերջինիս հետևողական իրականացում:

III. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ (ԼՈՒՄԱՎՈՐՉԱԿԱՆ) ՄԻՋԱՎԱՅՐ

ԳԱՂԱՓԱՐ

Ապահովել հանրության մարդկային ներուժի շարունակական զարգացման սոցիալ-մշակութային և կրթադաստիարակչական արդյունավետ միջավայր, որը կնպաստի և կերաշխավորի ազգային և համամարդկային արժեքների հիման վրա պետական մտածողությամբ, հայրենասեր և օրինապահ, բարոյական և իրավաչափ վարքագիծ դրսևորող և նման վարքագիծ քարոզող մարդ-անհատի և հայ հանրության ձևավարումը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ներդաշնակ զարգացող անհատ - «Արարող հասարակություն»

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դեպի համամարդկայինը տանող ազգային արժեհամակարգային հենքով կրթադաստիարակչական ամբողջական և համալիր համակարգի ներդնում՝ նախակրթարան, հանրակրթություն, միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն, հետբուհական և ցկյանս շարունակական կրթություն, հոգևոր, սպորտային և մարտական դաստիարակություն:
2. Գիտական ներուժի բացահայտման, զարգացմանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված հստակ և հրատապ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:
3. Կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման արմատական և շարունակական ավելացում
4. Կրթադաստիարակչական և գիտական աշխատանքի գայթակղության բարձրացում, ուսուցիչների, դասախոսների, գիտակրթական ոլորտի աշխատակիցների սոցիալական դերի բարձրացում
5. Հանրության անհատական և կոլեկտիվ մակարդակում իրավաքաղաքական և ընդհանրապես՝ մշակութային հասունության մակարդակի կտրուկ բարձրացմանն ուղղված մշակութային քաղաքականության և մարտավարության գործարկում, շարունակական բարձրացում, ցածր

սոցիալական, իրավամերժ մշակույթի դրսևորումների դեմ անհաշտ պայքար

6. Ազգային և համամարդկային արվեստի ու մշակույթի զարգացման խթանման պետական քաղաքականության գործարկում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ունենալով Արցախյան պատերազմի կործանարար հետևանքների հաղթահարման և COVID-19-ի համավարակի ազդեցությունների չեզոքացման կարճաժամկետ և գիտալիքահենք տնտեսության, 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու, գլոբալ տնտեսությունում մրցունակ լինելու, ներդաշնակ և ինքնաբավ հասարակության հեռահար տեսլականը՝ Լուսավոր Չայաստան կուսակցությունը իր քաղաքական ծրագրում նախատեսում է հետևյալը՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Կրթության բոլոր մակարդակների համար այնպիսի ազգային հայեցակարգի մշակում՝ դրանից բխող երկարաժամկետ ռազմավարությամբ, որը կունենա տևական շարունակականություն և ժառանգականություն՝ անկախ իշխանության փոփոխություններից, ազգային և համընդհանուր արժեքների վրա հիմնված լինելու և ժամանակակից կրթական միտումներին համահունչ լինելու շնորհիվ,
- ✓ Կրթության բոլոր ոլորտներում նախատեսվող փոփոխությունների և բարեփոխումների իրավական շրջանակների մշակում,
- ✓ Կրթական բոլոր մակարդակներին համընդհանուր, այդ թվով՝ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների համար հասանելիության ապահովում՝ բոլոր խելամիտ հարմարեցումներով,
- ✓ Կրթության ոլորտի բոլոր հաստատությունների համար հավասար հնարավորությունների և պայմանների ապահովում՝ տարբերակված ֆինանսավորմամբ և համաչափ զարգացման տրամաբանությամբ,
- ✓ Կրթության բովանդակության շարունակական զարգացումն ապահովող մշակումներով կրթության շարունակականության ապահովում յուրաքանչյուր մակարդակին բնորոշ բովանդակության լիարժեք յուրացմամբ,

- ✓ Պետության մասնակցությունը կրթական հաստատությունների կառավարման գործառույթներին նվազեցում՝ երաշխավորելով կրթական և գիտական գործունեության կառավարման, ռեսուրսների տնօրինման ավելի բարձր մակարդակի ինքնուրույնություն,
- ✓ Կրթական հաստատությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում, ֆինանսավորման արդյունավետ օգտագործման կառուցակարգերի ապահովում,
- ✓ կրթության ոլորտում ներգրավված մարդկային ռեսուրսների շարունակական վերապատրաստում, զարգացման խրախուսում, շրջափոխային գնահատում, տարբերակված վարձատրության կառուցակարգերի ներդրում ըստ որակավորման/գիտա-մեթոդական արդյունքի,
- ✓ կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաև կրթության և տնտեսության միջև երկխոսության, սոցիալական գործընկերության գործունե կառուցակարգերի ներդրում,
- ✓ ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազայի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին, ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիության և ուսումնական գործընթացում կիրառման շարունակական խթանում, համապատասխան ենթակառուցվածքների ապահովում, ուսումնական նյութերի շարունակական թվայնացում,
- ✓ տնտեսության և կրթության/գիտության միջև սերտ փոխգործակցության ապահովում՝ հարկային արտոնություններ տրամադրելով բուհերի հետազոտական-նորարական նախաձեռնություններում ներդրում կատարող ձեռնարկություններին,
- ✓ շրջափոխային մշտադիտարկման և որակի գնահատման կառուցակարգերի ներմուծում կրթական բոլոր մակարդակներում,
- ✓ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության փոխլրացականության և նախկին որակավորումների/գիտելիքի/հմտության ճանաչման ապահովում,
- ✓ Կրթության բոլոր մակարդակներում նյութական և մարդկային ռեսուրսների համօգտագործման մեխանիզմների ներդրում՝ միտված կրթության ոլորտում ծախսարդյունավետության բարձրացմանը,

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- ✓ **Նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնում առանց որևէ խտրականության Չայաստանի Հանրապետության տարածքում**, հատկապես շեշտադրելով այսպիսի հաստատությունների և կրթական ծառայությունների առկայություն մարզերում և հեռավոր գյուղական վայրերում՝ որպես երկրի համաչափ տարածքային զարգացման և գյուղապահպանության գործոն,
- ✓ Նախադպրոցական կրթության համակարգում ազգային ինքնության հենքի վրա ժողովրդավարական կրթական բովանդակության ամրապնդում՝ որպես 21-րդ դարում մրցունակ մարդկային ռեսուրսի ձևավորման նախապայման,
- ✓ Նախադպրոցական կրթության մանկավարժական և օժանդակ կադրերի պատրաստման և վերապատրաստման քաղաքականությունների և մեխանիզմների վերանայում՝ ժամանակակից միտումներին համահունչ,
- ✓ Նախադպրոցական տարբերակված և ներառական ծառայությունների ապահովում՝ ըստ տնտեսության, բովանդակության և սովորողների առանձնահատուկ կարիքների:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- ✓ Հանրակրթական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման լիազորությունների ապակենտրոնացում, այն է՝ բացառապես համայնքային միջոցներով՝ խրախուսելով ներդրումները համայնքապետարանի միջոցով, դրա երաշխավորությամբ և պատասխանատվությամբ:
- ✓ Փոքր համայնքներում, համայնքների ավարտված կամ ակնկալվող խոշորացման տրամաբանությամբ, նյութական և մարդկային ռեսուրսների համօգտագործման կառուցակարգերի ներդրմամբ որակայալ հանրակարթության ապահովում:
- ✓ Հանրակրթական հաստատությունների կառավարման մոտեցումների վերանայում՝ հոգաբարձուների խորհրդի գործառույթների հստակեցմամբ և տնօրենների ընտրության աշխատակարգերի վերանայմամբ,
- ✓ Հանրակրթության նոր ընդունված չափորոշիչների փորձարկում և վերանայում ուսուցիչների մասնակցությամբ, ըստ անհրաժեշտության՝ հանրակրթության

բովանդակությունը՝ ազգային հենքի վրա, ժողովրդավարական, գիտահենք և արժեքային, 21-րդ դարի տեխնոլոգիական զարգացումներին և միտումներին համահունչ դարձնելու համար,

- ✓ Չանրակրթության նոր ընդունված չափորոշիչների, գնահատման մշակվող կարգերի փորձարկում՝ հանրապետությունում համապատասխան գնահատման մեխանիզմների ներդրման նպատակով,
- ✓ Չանրակրթության արդյունավետ բովանդակային իրականացման համար նպաստավոր միջավայրի ապահովում և առանց խտրականության հավասար հասանելիության ապահովում աշակերտական համակազմի համար՝ անկախ ընտանիքի եկամտի մակարդակից, աշակերտի նախնական ունակություններից, սեռից, բնակավայրից և այլ գործոններից,
- ✓ Ավագ դպրոցների վերակազմակերպում՝ կամպուսային տարբերակով, որը կնպաստի շփման, ինքնուրույնության հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև մասնագիտական և ընդհանրական խորացված գիտելիքի և հմտությունների ձևավորմանը՝ նախապատրաստելով բարձրագույն կրթության մակարդակին:
- ✓ Ավագ դպրոցում կրթության և զինվորական կրթության ինտեգրում՝ ամառային կիսամյակում պարտադիր բանակումների միջոցով:
- ✓ Չանրակրթական դպրոցի մանկավարժական կազմի վերապատրաստումների և որակավորման բարձրացման քաղաքականության մշակում և գործարկում՝ հանրակրթության նոր որակի բովանդակության ներդրման և իրականացման նպատակով:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- ✓ Նախնական և միջին մասնագիտական կրթության դերի կարևորում և տարբեր մոդելների (դուալ կրթություն, աշխատանքի վրա հիմնված կրթություն)՝ տնտեսությանն անհրաժեշտ մասնագիտությունների հատկորոշման, համապատասխան ֆինանսավորման, տեխնիկական վերազինման և բովանդակային արդիականացման հիման վրա,

- ✓ Նախնական և միջին մասնագիտական կրթության որակի բարձրացում՝ նաև համապատասխան հաստատությունների հավատարմագրման գործընթացների արդյունքում,
- ✓ **Նախնական և միջին մասնագիտական կրթության՝ հանրակրթության հետ փոխկապակցում կամ** փոխլրացականությունը, որի ավարտին տրամադրվում է մասնագիտական որակավորում մասնագիտական աշխատանքի անցնելու հնարավորությամբ կամ կրթությունը բուհում շարունակելու հնարավորությամբ:
- ✓ Նախնական և միջին մասնագիտական կրթության հաստատություններում դասավանդողների մասնագիտական վերապատրաստումների անցկացում:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- ✓ Բարձրագույն կրթության ոլորտում ստեղծված իրավական և կառավարչական ճգնաժամերի հաղթահարում՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունմամբ,
- ✓ Մասնագիտական կողմնորոշման կենտրոնների և ԲՈՒՅ-երի միջև առկա համագործակցության հիման վրա պետության կողմից գերակա համարվող մասնագիտությունների ցանկի ստեղծում, որը կարտացոլի շուկայում պահանջվող աշխատատեղերի պահանջները:
- ✓ Բարձրագույն կրթության որակի բարելավում համապատասխան մասնագիտական գիտելիքներ և որակյալ բարձրագույն կրթության համաշխարհային փորձն ուսումնասիրած մասնագետների կրիտիկական զանգվածի, օրինակ՝ արտերկրում բնակվող և այնտեղ բարձրագույն կրթություն ստացած մեր հայրենակիցների վերադարձի միջոցով:
- ✓ Բարձրագույն կրթություն-հետազոտություն-տնտեսություն կապի ամրապնդում. բարձրագույն կրթությունը և հետազոտությունը պետք է հիմնված լինեն ակադեմիական գիտելիքի և աշխատաշուկայի պահանջները ապահովելու վրա՝ դրանով խթանելով հիմնարար և կիրառական գիտությունների զարգացումը և աշխատաշուկայի պահանջների բավարարումը:
- ✓ Բարձրագույն ուսումնական հաստատությունների լիարժեք ինքնավարության և ակադեմիական ազատությունների ապահովում ուսանողների ընտրության,

կառավարման, կրթական և հետազոտական գործընթացի կազմակերպման հարցերում, կրթության և հետազոտության որակի ու զարգացման հաշվետվողականություն:

- ✓ Բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտում Էթիկայի ապահովում՝ գրագողության դեմ իրական պայքարի միջոցով, բացառելով բուհն ավարտելու հնարավորությունն առանց գիտելիք ունենալու:
- ✓ Բարձրագույն կրթության ֆինանսավորման կառուցակարգերի վերանայում՝ ըստ տարեկան ցուցանիշների, պետությանն անհրաժեշտ մասնագիտությունների ու հետազոտությունների, ինչպես նաև բուհի զարգացման հիմնարար կարիքների:
- ✓ Միջազգային տեսանելիության ապահովում և հանրահռչակում՝ կրթության որակի բարձրացման և հետազոտությունների միջազգային հրապարակումների միջոցով:
- ✓ Բուհերի ֆինանսական հոսքերի տարբերակման համար նպաստավոր նախապայմանների ապահովում, ուսանողների վարձավճարներից կախվածության նվազեցում (որպեսզի ցածր առաջադիմությամբ ուսանողը չփոխադրվի հաջորդ կուրս, քանի որ դուրս թողնելը վնաս է բուհի բյուջեին): Սրան հնարավոր է հասնել միջազգային ուսանողների թվի, հետազոտությունների ծավալի, միջազգային ծրագրերից ֆինանսավորման ներհոսքի աճի ապահովման շնորհիվ:
- ✓ Ստեղծել հանրային հաշվետվողականության համակարգ՝ պետության և բուհերի շահագրգիռ զարգացման տեսլականով: Տարեկան բաց հաշվետու հանդիպում ոլորտի ներկայացուցիչների և ԱԺ համապատասխան մասնագիտական հանձնաժողովի հետ՝ լուծելով բուհերի ղեկավարների՝ նախարարությունից կախվածության բացառման հարցը:
- ✓ Երկրի զարգացման ռազմավարությանը և համաչափ տարածքային զարգացման առաջնահերթություններին համահունչ բարձրագույն կրթական հաստատությունները վերաբաշխում ըստ մարզերի,

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Յայաստանի Յանրապետության և հայ ազգի հիմնական ռեսուրսը գիտելիքն է, իսկ կազմակերպված գիտելիքը՝ գիտությունը, Յայաստանի պետականության զարգացման և հայ ազգի ազդեցիկության բարձրացման երաշխիքը:

Գիտելիքի կուտակման և նոր գիտելիք ստեղծելու, դրանց խրախուսման, ինչպես նաև դրա արդյունքի պաշտպանությունը միակ ճանապարհն է պետականության և ազգի առաջընթացի ապահովման գործում:

Յայաստանի Յանրապետությունը գիտության և հետազոտությունների ֆինանսավորումը պետք է արմատական փոփոխության ենթարկի՝ կտրուկ բարձրացնելով ՅՆԱ մակարդակում գիտության ֆինանսավորման չափաբաժինը, ինչպես նաև դա անի ամեն տարի՝ համամասնորեն:

Պետականաշինությանը լծված բոլոր անձինք պետք է առաջնորդվեն կարևոր սկզբունքով՝ գիտությունն է զարգացման առաջնային աղբյուրը:

Կարևորում ենք, որ ՅՅ գիտության ոլորտը լինի մրցունակ, հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունները խթանող, միջազգային գիտական և հետազոտական տարածքի հետ ինտեգրված, ստեղծարար, նորարար և մրցունակ տնտեսության ձևավորմանը և երկրի անվտանգությանը նպաստող համակարգ:

Նպատակահարմար ենք համարում գիտության ոլորտի բարեփոխումների իրականացումը, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը, այդ արդյունավետության գնահատման կոնկրետ չափանիշների ներդրումը, գիտական ենթակառուցվածքների արդիականացումը, գիտական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և երիտասարդ գիտնականների աջակցմանն ուղղված ծրագրերի իրականացումը, միջազգային չափորոշիչներին համապատասխանող և տնտեսության պահանջներից բխող գիտական հետազոտությունների ուղղություններում ռեսուրսների կենտրոնացումը, շեշտակի զարգացում ապահովող առանձին տեխնոլոգիաների ոլորտներում գիտական և գիտատեխնոլոգիական կենտրոնների ստեղծումը, աշխարհին հայտնի տեխնոլոգիաների յուրացման համար գիտական ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծում:

- ✓ Գիտության զարգացման ազգային ծրագրի մշակում և գործարկում:
- ✓ Գիտության ֆինանսավորման շարունակական աճի ապահովում:

- ✓ Գիտությամբ զբաղվելու գրավչության ավելացման նպատակով գիտախշատողների սոցիալական երաշխիքների ավելացում, հանրային կարգավիճակի բարձրացում և ընդգծում:
- ✓ Գիտահետազոտական կենտրոնների վերազինում:
- ✓ Երիտասարդ գիտնականների համար մասնագիտական աճի հստակ և չափելի կառուցակարգերի ներդրում:
- ✓ Գիտնականների աշխատանքի գնահատման հստակ չափորոշիչների մշակում և ներդրում:
- ✓ Երիտասարդ գիտնականների համար մատչելի բնակարան ձեռքբերման ծրագրի գործարկում:
- ✓ Բարձրագույն կրթական հաստատություններին կից ինկուբատորների և գիտահետազոտական հաստատություններին կից գիտական գերազանցության կենտրոնների հիմնում՝ ստարտափների աջակցության, շրջանավարտների ձեռներեցությունը խթանելու և տնտեսության ու կրթության/գիտության միջև սերտ փոխգործակցության համար:
- ✓ Հարկային արտոնություններ տրամադրելով բուհերի և գիտական կենտրոնների հետազոտական-նորարական նախաձեռնություններում ներդրում կատարող ձեռնարկություններին:
- ✓ Գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնի ստեղծում՝ նոր ստեղծված մտավոր սեփականությունն ուսումնասիրելու, նորույթների գնահատման և մտավոր սեփականության կիրառման հնարավոր պահանջարկը գնահատելու համար:
- ✓ Մտավոր սեփականության պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ներդրում և շարունակական զարգացում:
- ✓ Սփյուռքի պոտենցիալի ներգրավում գիտության զարգացման բոլոր շրջափուլերում:
- ✓ Ռազմաարդյունաբերության և գիտական զարգացման սերտ փոխգործակցության կառուցակարգերի ներդրում՝ դիտարկելով գիտությունը որպես անվտանգության կարևորագույն բաղադրիչ:
- ✓ Գիտությունների Ազգային Ակադեմիայի վերակազմավորում և վերազինում՝ դարձնելով այն համաշխարհային գիտության զարգացման միտումներին համահունչ ազգային գիտության զարգացման խթանման, ուղորդման, աջակցության, միջազգային գիտական համագործակցության մարմին՝ միտված

հայաստանյան գիտական արդյունքի միջազգայնացմանը և գիտական արդյունք ստեղծող հաստատությունների համար միջազգային փորձի, տվյալների բազաների ու ֆինանսական աղբյուրների հասնելիության ապահովմանը:

- ✓ Գիտությունների Ազգային Ակադեմիայի և գիտահետազոտական կենտրոնների համար գիտաչափական կամ որակական չափորոշիչների մշակում և ներդրում:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթն ունի հասարակական հարաբերությունների կարգավորման ֆունկցիա, ուստի դրա դերն ու նշանակությունը, հատկապես, հայ ժողովրդի պարագայում հնարավոր չէ գերազնահատել: «Արարող հասարակության» գաղափարախոսության մեջ հատուկ ընդգծված է մշակութային ժառանգության պահպանման և զարգացման կարևորությունը, քանի որ հենց մշակութային ժառանգությունն է հանդիսանում այն ամուր և հաստատուն կամուրջը, որի խորը իմացությունը կբերի համայն մարդկությանը «սպառողական անդունդից» դեպի «Արարող հասարակություն»: Հայ ժողովրդի մշակույթը հանդիսանալով քաղաքակրթաստեղծ, իր մեջ պահպանել է լրջագույն գիտելիքներ, ինչպես Մարդու, Տիեզերքի, այնպես էլ հասարակական ճշգրիտ հարաբերությունների վերաբերյալ: Հենց մշակույթն է, որ իր արմատով միավորում է մարդկությանը և թույլ չի տալիս վերջնականապես բռնել ինքնառջնացման ճանապարհը:

Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հոգևոր և ազգային ավանդույթների վրա խարսխված մշակութային միջավայրի ձևավորմանը, մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծմանը և ծառայությունների մատուցմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը և ժամանակակից մշակութային զարգացումներին հանրության լիիրավ մասնակցությանը, անհատի ստեղծագործական կարողությունների խթանմանը, ազգային ինքնության և քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված հասարակության ձևավորմանը:

Նշված ուղղություններով հարկավոր է իրականացնել.

- մշակութային ժառանգության մատչելիության ապահովման նպատակով՝ տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում,
- մշակութային կազմակերպություններին ձեռնարկատիրական գործունեություն հրականացնելու ավելի լայն հնարավորությունների ընձեռում,
- պատմամշակութային հուշարձանների, թանգարանների և գրադարանների պահպանում ու բարեկարգում՝ տուրիստական հոսքերի ուղղորդում դեպի այդ հաստատություններ,
- մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգում և նյութատեխնիկական բազայի ապահովում,
- մշակութային և գիտալուսավորչական հաղորդումների տեսակարար կշռի ավելացում հանրային հեռուստատեսության եթերում,
- մշակութային ժառանգության միջոցով արտասահմանում Հայաստանի դրական ընկալման ձևավորում,
- գրադարանային, թանգարանային, արխիվային, կինոֆոտո, տեսանկարահանումների և ձայնային ֆոնդերի համալրում և հարստացում,
- թանգարանային ֆոնդի ցուցանմուշների պահպանության դրոշմապիտակավորման համակարգի ներդրում,
- պետական մշակութային գաղափարախոսության ստեղծում,
- մշակութային կառույցների կառավարման օրենքի փոփոխություն,
- մշակութային ենթակառուցվածքների ապակենտրոնացում՝ պահպանելով Հայաստանի մշակութային ամբողջականությունն ու մարզերում համաչափ զարգացման հնարավորությունը
- մշակույթի ազատականացում և անկախացում պետության հովանավորչությունից
- Մեդրի-Իրան-Արցախ մշակութային հանգույցի ձևավորում
- մարզերում և մայրաքաղաքում ժամանակակից արվեստի կենտրոնների, դպրոցների ստեղծում և վերագործարկում
- մշակութային կենտրոնների ակտիվացում միջազգային հարթակներում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ապագայի նկատմամբ վստահությունն ունեցող երիտասարդներն են ստեղծելու ամուր և առողջ ընտանիք, անվտանգ և առաջ ընթացող երկիր:
- Երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում կարևորում ենք երիտասարդների լիարժեք ինքնադրսևորվելու, երջանիկ լինելու համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը, կրթումը, երիտասարդության զբաղվածության ապահովումը,
- Երիտասարդների՝ քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության բարձրացումը:
- Կարևորում ենք նաև սպորտի մասսայականացմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը, ֆիզիկական դաստիարակությունը, պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությունը, մանկապատանեկան սպորտի զարգացումը, մարզիչ-մանկավարժների պատրաստումն ու վերապատրաստումը, մարզադահլիճների գույքով ապահովումը:

IV. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ԳԱՂԱՓԱՐ

Սոցիալ-տնտեսական այնպիսի միջավայրի ապահովում, որը կերաշխավորի ազատությունն անհատի կենսական կարիքներից:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ճանապարհ սպառողից դեպի «արարող հանրություն»

ՆՊԱՏԱԿ

Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման, մրցունակ, առաջադեմ, բարձր կենսամակարդակ երաշխավորող պետություն և սոցիալական միջավայր ունենալու համար ձևավորել ֆինանսական, տնտեսական և սոցիալական միջավայր, որտեղ մարտիկ ազատ կլինեն կարիքից և կերաշխավորվի սեփական կյանքի որակը բարձրացնելու հավասար հնարավորություններ հանրության բոլոր անդամների համար:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը նպատակ ունի Հայաստանի Հանրապետությունում ձևավորել լիբերալ տնտեսական համակարգ՝ միևնույն ժամանակ կարևորելով պետության կարգավորող դերը տնտեսության արդյունավետության բարձրացման, մակրոտնտեսական կայունության, պետական ռազմավարական հետաքրքրությունների, սոցիալ-տնտեսական արդարության, տնտեսական անվտանգության կառուցակարգերի մշակման և ապահովման գործում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս նպատակներին հասնելու համար «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է.

1. տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների երաշխավորումը,
2. կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ պայքարը,
3. տնտեսության հեռանկարային ճյուղերը, փոքր և միջին ձեռներեցությունը խթանող դրամավարկային և հարկային արդյունավետ քաղաքականության

- իրականացումը, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների, վերականգնվող էներգետիկայի, ինտենսիվ գյուղատնտեսության, թեթև արդյունաբերության, հանքահումքային վերամշակող արդյունաբերության,
4. պետական բյուջեի թափանցիկության ապահովումը, բյուջեի կատարման, պետական գնումների և արտաքին ֆինանսական փոխառությունների օգտագործման արդյունավետության նկատմամբ իրական վերահսկողական կառուցակարգերի ամրագրումը,
 5. ներդրումների իրականացման և ապահովման ուղղությամբ սփյուռքի և միջազգային գործընկերների հետ համակողմանի և հետևողական աշխատանքի իրականացումը,
 6. Ընդհանուր ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականության շրջանակներում, նպատակ ունենալով զգալիորեն բարձրացնել օտարերկրյա ներդրումների ծավալը, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ուղղությամբ, ստեղծել օրենսդրական հիմքեր՝ պետություն-մասնավոր գործընկերության համար, բարձրացնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանվածությունը, կատարելագործել ազատ տնտեսական գոտիների գործունեությունը:
 7. Թիրախավորված ներդրումային քաղաքականության շրջանակներում, առանձին ոլորտներում (օրինակ՝ թեթև արդյունաբերություն, կոշիկի արտադրություն և այլն) ներառական տնտեսական աճին նպաստող բիզնես ծրագրերը խթանող աջակցության տրամադրում, օտարերկրյա ներդրումների ներգրավման թիրախային ռազմավարությունների իրականացում, Հայաստանում ներդրողների հետ աշխատանքի, ներդրումների ներգրավման և հետներդրումային սպասարկման ուղղությամբ կարողությունների ձևավորում և շարունակաբար ամրապնդում, մարզային համայնքներում ներդրումային ծրագրերի աջակցման գործուն մեխանիզմների ներդրում:
 8. Ստեղծարար, նորարարական և տեխնոլոգիական զարգացման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ գույքագրել մեր կարողությունները (ինստիտուցիոնալ, գիտական, մասնագիտական, կազմակերպություններ, ծրագրեր, կրթություն, հետազոտություններ, օրենսդրություն և այլն), մշակել

և իրականացնել նորարարության խթանման ռազմավարություն, առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրություններին աջակցության տրամադրում:

9. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության և զարգացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել ինստիտուցիոնալ հնարավորություններ՝ ՓՄՁ-ի ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման համար, ներդնել ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության նոր գործիքակազմ և շարունակաբար թարմացնել այն, միջազգային կառույցների հետ համագործակցության միջոցով իրականացնել ՓՄՁ ոլորտում աջակցության ծրագրեր:
10. Արտահանումը խթանելու նպատակով անհրաժեշտ է շարունակաբար և հնարավորինս վերացնել դեպի արտահանման շուկաներ առկա մուտքի խոչընդոտները, բարձրացնել նոր արտահանման շուկաների հասանելիությունը, թիրախային երկրների հետ կնքել երկկողմանի համաձայնագրեր՝ առևտրի բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով, ստեղծել հայկական արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակ:
11. Շարունակաբար պետք է քայլեր ձեռնարկել ՀՀ-ում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ՝ թիրախավորելով Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկուլյցի առաջավոր երկրների շարքում դիրքավորումը:
12. Տարածքային համաչափ և մասնագիտացված տնտեսական զարգացումը:
13. Ներդրումային ատլասի ստեղծում և ներդրողի համար գործարարություն իրականացնելու գործընթացների դյուրինացում:
14. Ներգրավվել տարածաշրջանային և միջազգային տնտեսական ենթակառուցվածքներում:
15. Պետության և գործարարության կապի հեշտացման հարթակի ստեղծում՝ «մեկ գործողություն» սկզբունքի կիրարկմամբ:
16. Համայնքներում սոցիալական ձեռնարկատիրության մոդելների ներդրում :

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ՉԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ տարածքներում գործարարության զարգացման, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման, աշխատատեղերի ստեղծման նպատակով անհրաժեշտ է՝

1. մշակել համապատասխան պետական աջակցության ծրագիր, որի շրջանակներում աջակցություն կտրամադրվի որոշակի չափանիշներին բավարարող՝ կայուն և ներառական աճին նպաստող ներդրումային ծրագրերին:
2. համապատասխան կառույցների հետ համատեղ կազմակերպել դասընթացներ՝ ներդրումային ծրագրերի մշակման և դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
3. դիտարկել նշված ներդրումային ծրագրերի վարկավորման տոկոսադրույքների սուբսիդավորման հարցը:
4. մասնագիտացված ապակենտրոնացման մեխանիզմի կիրառում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, կարևորելով ՀՀ պարենային անվտանգությունը, գյուղական համայնքների կայուն զարգացումը, ՀՀ մրցունակության բարձրացումը համաշխարհային գյուղատնտեսական շուկայում, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ժողովրդի լրջագույն զբաղվածությունը գյուղատնտեսական ոլորտում, առաջարկում է «կլաստերային գյուղատնտեսության» զարգացման ծրագիր:

Ծրագիրը նախատեսում է գյուղմթերք վերամշակող գործարանների արտադրական հզորությունների հիմքի վրա տարածաշրջանային գյուղատնտեսական կլաստերների ստեղծում: Կլաստերի շրջանակներում իրականացվելու է գյուղատնտեսական մթերքների արտադրության շղթայի բոլոր մասնակիցների համագործակցությունը «հողից մինչև վաճառասրահ» սկզբունքով:

Կլաստերի շրջանակներում համագործակցելու են հիմնականում տարածաշրջանի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչությունը և Գյուղմթերք վերամշակող գործարանները:

Արցախի և Հայաստանի մարզերի բնական-կլիմայական և Էկոլոգիական պայմանները թույլ են տալիս բարելավել և զարգացնել գյուղատնտեսական արտադրությունը: Այս պարագայում կարելի է զարգացնել ինչպես

գյուղատնտեսական ավանդական արտադրությունը (տվյալ դեպքում խոսքը գնում է բուսաբուծության մասին), այնպես էլ վայրի հատապտուղների և մրգերի հավաքումը: Գաղափարն այն է, որ գյուղատնտեսական արտադրության ոլորտում ներդրվեն էկոլոգիապես մաքուր արտադրանքի ինտենսիվ մշակման տեխնոլոգիաներ, ինչպես նաև էկոլոգիապես մաքուր վայրի հատապտուղների, սնկերի և մրգերի վերամշակման տեխնոլոգիաներ:

Արդիական տեխնոլոգիաների կիրառումը թույլ կտա բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը և կձևավորի գյուղատնտեսության զարգացման համար նոր էկոհամակարգ (միջավայր), որտեղ արտադրական շղթայի բոլոր մասնակիցները աշխատելու են մեկ միասնական արդյունքի վրա: Այն է՝ գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետ մշակումն և սպառումն է:

Այս օրվա դրությամբ Հայաստանի և Արցախի գյուղատնտեսական արտադրությունը մրցակցային շուկայում զգալիորեն գիջում է հարևան երկրների արտադրողներին: Դա պայմանավորված է արտադրանքի բարձր ինքնարժեքով, շրջափակումով, ինչպես նաև փոքր քանակով: Կարևոր գործոն է նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի բացակայությունը: Տվյալ պարագայում հնարավոր չէ ապահովել հողի արդյունավետ մշակումն ու որակյալ արտադրության ստեղծումը:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև գյուղատնտեսական ոլորտում միասնական պլանավորումը թույլ կտան ստանալ բարձր որակի և/կամ օրգանական արտադրանք, որը ունենալու է սովորական գյուղատնտեսական ապրանքների հետ համեմատած ավելի բարձր որակ և արժեք ու դուրս է գալու նոր մրցակցային դաշտ, որտեղ այդ արտադրանքը կունենա մի շարք մրցակցային առավելություններ:

Գյուղատնտեսության արդիականացման պարագայում կարևոր է նաև վարել այդ ապրանքների արտահանման արդյունավետ քաղաքականություն:

Կլաստերի կազմակերպչական կառուցվածքը:

Ծրագրի իրականացման նպատակով Արցախում և Հայաստանի մարզերում պետք է ստեղծվեն տարածաշրջանային համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք ապահովելու են կապը գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց հետ:

Այդ ենթակառուցվածքը բաղկացած է լինելու տարածքային կուտակման կետերից, որոնք համակարգելու են ուսուցման, տեխնոլոգիաների ներդրման, գյուղատնտեսական ոլորտում անհրաժեշտ ծառայությունների մատուցման (հողի

մշակում, տրանսպորտի ապահովում, գյուղատնտեսական պարարտանյութերի մատակարարում և այլն), գյուղմթերքների արտադրության, վայրի պտուղների հավաքման և նախնական վերամշակման գործընթացը:

Կուտակման կետերի նպատակներն են.

- արտադրության գործընթացում ներգրավված բնակչության հետ փոխգործակցության կազմակերպում,
- խորհրդատվական օգնության տրամադրում,
- ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում,
- հողի մշակման տեխնիկական ապահովում,
- գյուղատնտեսական ապրանքների արտադրության ֆինանսավորման կազմակերպում,
- ապրանքների ընդունում և նախնական վերամշակում:

Կուտակման կետերը կիրականացնեն և (կամ) կհամակարգեն հետևյալ գործողությունները.

- նախապատրաստական աշխատանքներ նախքան բերքահավաքը,
- բերքահավաք/արտադրություն,
- ապրանքի նախնական փաթեթավորում դաշտում գտնվող տարաների մեջ,
- փաթեթավորված ապրանքի տեղափոխումը պահեստ,
- հողի մնացորդներից և այլ իրերից մաքրում,
- ապրանքների սորտավորում (փչացած, գերհասուն կամ չհասած ապրանքների հեռացում),
- արտադրանքի տեսակավորում/ընտրություն՝ ըստ որակի չափանիշների և չափսերի,
- ապրանքի նախապես սառեցում:

Կուտակման կետերի շնորհիվ հնարավոր կլինի կազմակերպել գյուղատնտեսական արտադրությունը միասնական համակարգով, որը նախատեսելու է միասնական հողերի մշակում, տեխնոլոգիաների և ստանդարտների ներդրում ու կիրառում: Այսպիսով, փաստորեն իրականացվելու է հողերի պայմանական խոշորացում, կառավարման մակարդակով:

Ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքների հետ մեկտեղ առաջարկվում է արդիականացնել մարզերում գործող Գյուղմթերք վերամշակող գործարանները, հնարավոր է նաև ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) ստեղծումը:

Այս Գյուղմթերք վերամշակող գործարանները կկատարեն «չոր նավահանգստի» գործառույթները: Ենթադրվում է, որ իրենց հիմնական գործառույթները կլինեն.

- կուտակման կետերի աշխատանքների համակարգում է ֆինանսավորում,
- գյուղատնտեսական ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցում,
- գյուղատնտեսության ապրանքների և ոչ պարենային ապրանքների վերամշակում,
- սննդամթերքի արտադրություն,
- գյուղատնտեսության օժանդակ գործունեություն, ներառյալ միջազգային որակավորում ունեցող մասնագիտացված լաբորատորիաների ծառայություններ,
- մեծածախ առևտուր,
- միջևորդական գործունեություն առևտրի ոլորտում,
- տրանսպորտային ծառայություններ,
- պահեստավորման ծառայություններ,
- արդյունաբերական արտադրանքի վերամշակման ծառայություններ,
- ֆինանսական միջևորդություն,
- մեքենաների և սարքավորումների վարձույթ, լիզինգ,
- փաթեթավորման գործողություններ:

Գյուղմթերք վերամշակող գործարանների տարածքում իրականացվելու են հետևյալ գործողությունները.

- արտադրանքի վերամշակում,
- սննդամթերքի արտադրություն,
- պահեստավորման համար ապրանքների փաթեթավորում,
- ապրանքների պահեստավորում,
- ապրանքների նախնական վաճառքի ընտրում և տեսակավորում,
- ապրանքների նախնական վաճառքի փաթեթավորում,
- ապրանքների հաճախորդներին առաքում:

Գյուղմթերք վերամշակող գործարանները ձևավորելու են գյուղատնտեսական մթերքների և վայրի պտուղների ձեռք բերման պահանջարկ, ինչպես նաև մշակելու են գյուղատնտեսական արտադրանքի ստեղծման քաղաքականությունը, սահմանելու են կիրառվող ստանդարտները: Իրենց գործունեությունը համակարգվելու է

մասնագիտացված կազմակերպության կողմից, որը իրականացնելու է գիտաարտադրական գործունեության կարգավորումը, ներգրավելով միջազգային մասնագետներին և կիրառելով առաջատար միջազգային փորձը: Այս օրվա դրությամբ բանակցություններ են ընթանում այդ կազմակերպության գործունեությունը ապահովելու համար մասնագիտացված միջազգային կազմակերպություններ ներգրավելու, ինչպես նաև ծրագրի իրականացման համար միջազգային ֆինանսական կազմակերպություններից միջոցներ ներգրավելու նպատակով:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և վայրի հատապտուղների, սնկերի և մրգերի հավաքման ապրանքները, կուտակման կետերում նախնական վերամշակումից հետո, կուղղվեն գյուղմթերքի վերամշակող գործարաններ, որտեղ կկատարվի վերջնական վերամշակում, փաթեթավորում, սերտիֆիկացում և այլն: Դրանից հետո կիրականացվի Էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտահանումը, որպես Հայաստանում արտադրված ապրանք:

Կարող ենք դիտարկել նաև արտադրանքի համար միասնական ապրանքանիշի ձևավորման հարցը:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ջրային ռեսուրսների արդյունավետ և ամբողջական օգտագործում:
2. «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է ջրային տնտեսության համակարգի հետագա զարգացման ու բարեփոխումների, ինչպես նաև ֆինանսական կայունության ապահովումը, ենթակառուցվածքների ու ոլորտային հաստատությունների ինքնաբավ և տնտեսապես անկախ գործունեությանը նպաստող կառավարման նոր համակարգերի ներդրումը, տարբեր համայնքների բաշխիչ ցանցերի բարելավումը՝ ջրակորուստների կրճատման, ջրի բաշխվածության ապահովման նպատակով, ջրի որակի բարձրացումը, սպասարկման տարածքի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը, խմելու ջրի նոր ռազմավարության ներդրումը:
3. Կարևորվում է նաև ոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման ներդրումային, ինչպես նաև ջրամբարաշինության ծրագրերի իրականացումը, ոռոգման համակարգի զարգացման ծրագրի մշակումն ու իրականացումը, նոր տեխնոլոգիաների և կառավարման տեղեկատվական

համակարգի միջոցով ոռոգման արդյունավետության բարձրացման, ջրակորուստների կրճատման, ջրախնայողության, ոռոգվող հողատարածքների ավելացման, ջրի առցանց, թափանցիկ կառավարման համակարգի ներդրումը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը կարևորում է Չայաստանի էներգետիկ անկախության և անվտանգության ապահովումը, տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում երկրի ունեցած զգալի ներուժի իրացումը, այլընտրանքային էներգետիկայի աղբյուրների ավելացումը, էներգախնայողության ապահովումը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացման ապահովումը՝ հենվելով ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների մատակարարման տարատեսականացման, էներգաարդյունավետ ժամանակակից միջոցների իրականացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԿԱՊ

1. ՏՅՏ և կապի բնագավառում անհրաժեշտ ենք համարում ենթակառուցվածքների բարելավումն ու զարգացումը, որակյալ փոստային կապի ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը:
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կարևորում ենք հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, սկսնակ բիզնեսների, ստարտափների, նորարական գաղափարների, գիտական, գիտատեխնիկական և նորարարական գործունեության խթանումը, հատկապես՝ ՅՅ մարզերում դրանց խթանումը, տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության, կիբեռանվտանգության և անհատական տվյալների պաշպանության բարձրացման ապահովումը, որակյալ կադրերի պատրաստումը և մասնագիտական կարողությունների զարգացումը, ՏՅՏ զարգացման ռազմավարության մշակումն ու իրականացումը, հայկական բրենդի ձևավորումը, մրցունակության բարձրացումը, ՅՅ մարզային համայնքներում հագեցած նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծումը, գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցության խթանումը, աշխարհում հայտնի տեխնոլոգիաների յուրացման համար ինստիտուցիոնալ և գիտական կարողությունների ստեղծումը և շարունակաբար զարգացումը, գիտական արդյունքների առևտրայնացման խթանումը, տեղական մրցունակ ՏՏ

արտադրանքի օգտագործումը, ՏՀՏ ծառայությունների մատուցման որակի, արագագործության, հասանելիության բարձրացումը, բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ռազմարդյունաբերության զարգացումը:

ՏՐԱՆՊՈՐՏԸ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է ճանապարհների որակի ու անվտանգության զգալի բարելավումը, տրանսպորտային ենթակառուցվածքների շարունակական զարգացումը, տրանսպորտի ոլորտում մրցունակության, փոխադրումների, ծառայությունների հասանելիության ապահովումը, բեռնային փոխադրումների ծավալների մեծացումը, մասնավոր ներդրումների ներգրավումը, ճանապարհային տնտեսության կառավարման համակարգի շարունակական զարգացումը, միասնական երթուղային ցանցի մասնավոր օպերատորի ներգրավումը, Էլեկտրոնային կառավարման և միասնական տոմսի համակարգի ներդրումը, տրանսպորտային անվտանգության ապահովումը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության և գազաբալոններ շահագործման կարգավորումը, երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացումը, ՀՀ-ում այլընտրանքային վճարովի ճանապարհների ստեղծումը, մատչելի ավիափոխադրումների կազմակերպումը, բյուջետային ավիաընկերությունների ներգրավումը, չվերթների աշխարհագրության ընդլայնումը, փոքր ավիացիայի զարգացումը:

ՉԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

1. Չբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում,
2. հյուրանոցային տնտեսության զարգացում,
3. Լեռնադահուկային զբոսաշրջության զարգացում
4. պատմական-մշակութային շեշտադրումով զբոսաշրջության զարգացում,
5. բժշկական զբոսաշրջության զարգացում,
6. զբոսաշրջության զարգացման ուղղությամբ անհրաժեշտ ենք համարում հանրապետության տարածքում ներդնել ժամանակակից զբոսաշրջային տեղեկատվական միասնական ցանց, համաշխարհային շուկայում ամրապնդել Հայաստանի՝ որպես ապահով և զբոսաշրջության համար գրավիչ երկրի

նկարագիրը, Հայաստանի ճանաչելիության մեծացման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացիայի ապահովման նպատակով շարունակաբար իրականացնել թիրախային ռազմավարություններ, բարձրացնել զբոսաշրջային ծառայությունների որակի նկատմամբ պահանջները, աջակցել և խթանել ՀՀ մարզերում զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը (ավանդական փառատոներ, տոնակատարություններ և այլն), մշակել և իրականացնել Էկոտուրիզմի զարգացման ռազմավարությունը, ընդլայնել մարզական զբոսաշրջությունը, կոնկրետ թիրախային երկրների քաղաքացիների համար սահմանել առանց արտոնագրի մուտքի ռեժիմ կամ դյուրացնել մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը, քաղաքաշինական գործունեության արդյունավետության բարձրացումը, քաղաքաշինության բնագավառում ներդրումային գրավչության և գործարար միջավայրի բարելավումը, ազատ մրցակցային դաշտի ստեղծումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, շինարարական կազմակերպությունների նորագույն տեխնոլոգիական և տեխնիկական հագեցվածության բարձրացումը, մրցունակ մասնագետների պատրաստումը, շենքերի և շինությունների սեյսմակայունության և հուսալիության ապահովումը, բազմաբնակարան շենքերի կառավարման խնդիրների, ճարտարապետական գործունեության և կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգումը, շինարարության անհրաժեշտ որակի ապահովումը, շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

1. Հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է միտված լինի մակրոտնտեսական կայունության ապահովմանը, պետական պարտքի

կայունացմանը, տնտեսական աճի խթանմանը և աճի ներուժի աստիճանական բարձրացմանը, բյուջետային կանոնների պահպանմանը:

2. Պետական եկամուտների քաղաքականությունը պետք է ապահովի արդար և կանխատեսելի միջավայր բիզնեսի և օտարերկրյա ներդրողի համար: Այն պետք է ապահովի ռեսուրսների արդարացի վերաբաշխում՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով արտահանելի հատվածի համար:
3. Թափանցիկ և միջազգային հաշվետվողականության սկզբունքներով գործելը բիզնեսի համար անհրաժեշտություն է՝ երկրում մրցունակ և երկարաժամկետ կայուն աճ ապահովելու համար:
4. Պետական ֆինանսները պետք է օգտագործվեն նպատակային, խնայողաբար և արդյունավետ:
5. Ֆինանսական շուկաների զարգացման և կենսաթոշակային երկարաժամկետ խնայողությունների ներդրման հարթակների ձևավորման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել քայլեր՝ կուտակված միջոցները ՀՀ տնտեսության իրական հատված ուղղելու նպատակով:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարկային և մաքսային համակարգերը պետք է լինեն արդյունավետ և ունենան սովորաբար տնտեսության կրճատման և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ կարողություններ: Հարկային և մաքսային վարչարարության իրականացման արդյունքում պետք է ապահովվի հարկային եկամուտների կայունությունը:

Անհրաժեշտ է աստիճանաբար անցում կատարել պատժողական քաղաքականությունից դեպի գործընկերային հարաբերությունների հաստատում հարկատուի հետ՝ պահպանելով չարամիտ կարգազանցություն դրսևորող հարկատուների նկատմամբ վարչական ներգործության անհրաժեշտ գործիքակազմը:

Հարկային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է շարունակաբար և հետևողականորեն կրճատել սովորը, նվազագույնի հասցնել սովորաբար աշխատավարձերի վճարման արատավոր պրակտիկան, վերանայել անշարժ գույքի հարկման մեխանիզմները՝ անցում կատարելով անշարժ գույքի միասնական հարկման արդարացի համակարգի, ընդլայնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակը:

1. Հարկային ու մաքսային օրենսդրության պարզեցում և հարկային օրենսգրքին սահմանադրական օրենքի կարգավիճակի տրամադրում:
2. Հարկային և մաքսային համակարգերը պետք է լինեն արդյունավետ և ունենան սովերային տնտեսության կրճատման և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ կարողություններ: Հարկային և մաքսային վարչարարության իրականացման արդյունքում պետք է ապահովվի հարկային եկամուտների կայունությունը:
3. Անհրաժեշտ է աստիճանաբար անցում կատարել պատժողական քաղաքականությունից դեպի գործընկերային հարաբերությունների հաստատում հարկատուի հետ՝ պահպանելով չարամիտ կարգազանցություն դրսևորող հարկատուների նկատմամբ վարչական ներգործության անհրաժեշտ գործիքակազմը:
4. Հարկային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է շարունակաբար և հետևողականորեն կրճատել սովերը, նվազագույնի հասցնել սովերային աշխատավարձերի վճարման արատավոր պրակտիկան, վերանայել անշարժ գույքի հարկման մեխանիզմները:
5. Ազատ տնտեսական տարածքների բնագավառում քաղաքականության որակական փոփոխություն և նման տարածքների զարգացում
6. Հարկային, մաքսային վարչարարության և ընդհանրապես՝ պետություն-մասնավոր հատված ընդհանուր վարչարարության պարզեցում

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, գիտակցելով ֆինանսաբանկային համակարգի կարևորությունը տնտեսության մեջ, առաջարկում է տվյալ ոլորտի զարգացման հետևյալ տեսլականը՝

Ֆինանսաբանկային համակարգը պետք է հանդիսանա երկրի տնտեսության արդար տերն ու ջանասեր ծառան՝ միաժամանակ:

ՆՊԱՏԱԿ

Ձևավորել տեխնիկապես և տեխնոլոգիապես գերհագեցած ֆինանսաբանկային համակարգ, որի շահութաբերությունը ամբողջությամբ կախված կլինի երկրում

ձևավորվող իրական Ավելացված արժեքից, միջազգային համագործակցությունից և տնտեսության պահանջներին արձագանքելու ճկունությունից ու ունակությունից:

➤ Ֆինանսաբանկային համակարգի հիմնական խնդիրները

1. Վճարահաշվարկային համակարգի սպասարկում,
2. Տնտեսության մեջ առկա ավելցուկային դրամական միջոցների վերաբաշխում,
3. Միջազգային ֆինանսական շուկայի և ներքին տնտեսվարողների կապի ապահովում,
4. Ներդրումային ծրագրերի ֆինանսավորում/համաֆինանսավորում:

➤ Ֆինանսաբանկային համակարգի զարգացման հիմնական տրենդը

Ֆինանսաբանկային համակարգի ողնաշարը և թելադրողը հանդիսանում է բանկային համակարգը և միայն նա է ունակ իրականացնել վերը նշված խնդիրները միաժամանակ: Այդ խնդիրների բովանդակությունը ժամանակի մեջ էականորեն փոխվում է՝ շատ արագ, հաճախ նաև կտրուկ: Հնարավոր չէ ձևավորել ժամանակին համահունչ տնտեսություն, եթե այն չի սպասարկվում այդ ժամանակից առնվազն մեկ քայլ առաջ գտնվող բանկային համակարգի միջոցով:

Ուստի ներկայիս բանկը պետք է լինի տեխնիկապես զինված, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավոր առավելագույն և անընդհատ բարձրացող մակարդակով, նոր գործիքների արագ յուրացման ու կիրառման ճկունությամբ, տնտեսության պահանջներին արագ արձագանքելու ունակությամբ և կարողանա կանխատեսել ու նախապատրաստվել տեսանելի ապագայում տնտեսության կողմից իրեն առաջադրվելիք պահանջների արձագանքմանը:

➤ Ֆինանսաբանկային համակարգի կառավարման համակարգը

Ֆինանսաբանկային համակարգի կառավարումը ըստ էության բաժանվում է երկու հիմնական մասի՝ պետական կառավարում և ներքին կառավարում:

Պետական կառավարում – Այս համակարգի ժամանակին համընթաց զարգանալու պոտենցիալ մեծացնելու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել պետության անմիջական ուղղակի ազդեցությունը: Ֆինանսաբանկային համակարգը պետք է դադարի լինել դրամավարկային քաղաքականության իրականացման գործիք և դառնա իրապես ինքնուրույն Համակարգ: Պետության (պետական լիազոր մարմնի) և Համակարգի փոխհարաբերությունները պետք է բացառապես սահմանափակվեն գործող օրենսդրությամբ և տնտեսական շահագրգռվածությամբ: Ուստի պետք է տարանջատվեն Համակարգի կառավարման ու վերահսկման պետական գործառույթները պետության դրամավարկային քաղաքականության մշակման ու

իրականացման, ազգային արժույթի Էմիսիայի գործառույթներներից, դրանք պետք է վերապահվեն տարբեր պետական մարմինների:

Ներքին կառավարում – ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները առավելագույնս օգտագործելու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել սուբյեկտիվիզմը և իրապես ներդնել կորպորատիվ կառավարման համակարգ: Անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել ԻՍՕ Որակի կառավարման ստանդարտների և Բազելյան կոմիտեի մոտեցումների ներդրումը:

➤ Ֆինանսաբանկային համակարգի վերահսկողությունը
Համակարգի վերահսկողությունը պետք է իրականացվի բացառապես պրոֆեսիանալ պետական լիազոր մարմնի կողմից և արտահայտվի երկու հիմնական ուղղություններով`

1. Օրենսդրության պահպանում,
2. Գլոբալ (համակարգային) ռիսկերի բացահայտում և կառավարում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորարարության զարգացման ապագան պետությանը ստիպում է մեծ ուշադրություն դարձնել այդ առաջընթացի հիմնական կրողներին` երիտասարդներին. այդ քաղաքականության հիմնական խնդիրները լուծվելու են հետևյալ մոտեցումներով`

1. Երիտասարդների կարիքների գնահատում և առավել ընդգրկուն երիտասարդական պետական քաղաքականության մշակում,
2. կադրային բանկի ստեղծում` մինչև 30 տարեկան սահմանափակմամբ` յուրահատուկ պետական հոգածության ինստիտուտների կիրառմամբ,
3. խթանել երիտասարդների միջմշակութային շփումները,
4. ստեղծել ուսանողների և աշակերտների փոխանակման ծրագրեր Հայաստանի և սփյուռքի գաղթօջախների միջև:
5. Երիտասարդների կարողությունների բացահայտում, հմտությունների զարգացում և նրանց ընդգրկում կարևորագույն ոլորտներում` պահպանելով ՀՀ-ում համաչափ զարգացման պայմանները,
6. Հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն,

7. Հասարակական կյանքին երիտասարդների (այդ թվում՝ նաև խոցելի խմբերի) և երիտասարդական աշխատողների մասնակցությանն ուղղված ծրագրերի խթանում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հասարակության սոցիալական խնդիրների լավագույնս լուծման եղանակը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետք է պայքարել սոցիալական անարդարության և դրա առաջացման պատճառների դեմ: Անհրաժեշտ է վերանայել ոչ նպատակային օժանդակության քաղաքականությունը՝ այն դարձնելով նպատակային և ընդլայնելով պետության կողմից տրամադրվող սոցիալական օժանդակությունը իրապես կարիքավոր խմբերին:
2. Անվճար ծառայությունները, այդ թվում՝ բժշկական օգնությունը, պետք է տրամադրվեն միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա:
3. Սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնուրույնաբար կայուն եկամտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծումը և պետական նպաստ ստանալու ձգտման ապախթանումը պետք է հանդիսանան մեր կարևոր նպատակներից մեկը:
4. Սոցիալական ծառայություններ տրամադրելիս պետք է հաշվի առնել շահառուի իրական կարիքը:
5. Կարևոր ենք համարում սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը և զարգացումը, տեղական սոցիալական ծրագրերի մշակումը՝ համայնքի սոցիալական կարիքների գնահատման միջոցով, ծրագրի համար ֆինանսական միջոցների ներգրավումը, սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրման այլընտրանքային մեխանիզմների ներդրումը, աշխատող աղքատների թվի հետևողական նվազումը, նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացումը՝ ելնելով սպառողական զամբյուղի արժեքի բարձրացումից:

ԱՆԱՊԱՐՈՎՈՒԹՅՈՒՆ

1. Սոցիալական բնակարանաշինություն մարզերում և մայրաքաղաքում՝ անօթևանների խնդիրը լուծելու նպատակով: Հայաստանում չպետք է լինի ոչ մի

անօթևան: Այդ խնդիրը լուծել նաև ժամանակավոր կացարանների կառուցմամբ, շահագործմամբ:

2. Գյուղում տնակների բնակիչներին տեղավորել ժամանակավոր կացարաններում, ապա նաև սոցիալական բնակարաններում, իսկ նրանք, ովքեր պետության կողմից երկրաշարժից հետո տուն չեն ստացել՝ ապահովել բնակարանով:
3. Անապահովության «Փարոս» համակարգի վերանայում:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

1. Կենսաթոշակի հաշվարկ՝ նվազագույն սպառողական զամբյուղին համապատասխան: (Ներկա կենսաթոշակը չի բավարարում կենսաթոշակառուի նվազագույն ծախսերին: Դա առաջին և անհրաժեշտ քայլերից է մեր կենսաթոշակառուների համար ապահովելու արժանապատիվ ծերություն):
2. Միայնակ տարեցների կոմունալ վարձավճարի փոխհատուցման մեխանիզմների մշակում և կիրառում
3. Միայնակ տարեցների դեղորայքի փոխհատուցման մեխանիզմների մշակում և կիրառում:

ՉԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐ

1. Չաշմանդամություն ունեցող բոլոր քաղաքացիների համար (1-3 կարգ) առանց խտրականության պետբյուջեի միջոցների հաշվին արտադպրոցական, բարձրագույն և հետբուհական կրթության հնարավորություն
2. Մշակութային օջախների, խանութների, հասարակական տրանսպորտի, մայթերի հասանելության աստիճանական ապահովում շարժողական խնդիրներով հաշմանդամություն ունեցողների համար:
3. Չաշմանդամություն ունեցող անձանց համար (1-3 կարգ) ապահովել բարձրակարգ բուժսպասարկմամբ և անհրաժեշտության դեպքում պրոթեզավորմամբ:
4. Շարժողական խնդիրներով հաշմանդամություն ունեցողների համար կիրառության մեջ դնել նրանց հարմարեցված սոցիալական տաքսիներ, որոնք կիրառելի կլինեն բուժհաստատություններ, այլ հրատապ այցերի դեպքում:

V. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

ԳԱՂԱՓԱՐ

Անձնավորված իշխանական համակարգից անցում ինստիտուցիոնալ կառավարման միջավայրի:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Իշխանության իրավունքը՝ որպես արդյունավետ կառավարման պատասխանատվություն:

ՆՊԱՏԱԿ

Պետականության զգայական ընկալման հասունացում մինչև դատողական մակարդակ, որը պետք է արտահայտվի առողջ քաղաքական միջավայրով, ողջախոհության և մասնագիտական գիտելիքների, փորձառության, հմտությունների, կարողությունների հիման վրա պետական կառավարմամբ, պետական և քաղաքական ինստիտուտների հետևողական զարգացմամբ և առկա մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սահմանադրական փոփոխությունների նախաձեռնում՝ հիմնված բացառապես մասնագիտական աշխատանքի սկզբունքի վրա՝ բացառելով քաղաքական շահերի ցանկացած սպասարկում:
2. Սահմանադրական կայունության նախադրյալների մշակում:
3. Պետական կառավարման ճկուն սահմանադրական կառուցակարգերի սահմանում, որոնք ունակ կլինեն արտաքին և ներքին միջավայրային փոփոխություններին արձագանքեն համահունչ՝ պահպանելով սահմանադրական կայունությունը և բացառելով քաղաքական ու կառավարման հնարավոր ճգնաժամերը:
4. Իշխանության թևերի փոխզսպումների, հակակշիռների, իրական համագործակցության կառուցակարգերի սահմանում:
5. Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների ու դրանց իրացման իրական սահմանադրական երաշխիքների սահմանում:

6. Սահմանադրական մարմինների կարգավիճակի հստակեցում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՉԱՐԳԱՑՈՒՄ

1. Պետական կառավարման համակարգում ստանդարտացման ինստիտուտի ներդրում,
2. կադրային պետական քաղաքականության իրականացում՝ հիմնված գիտելիքի, մանսագիտական հմտության, փորձառության, բարոյական կերպարի և կարգապահության վրա: Պետական կառավարման բոլոր մակարդակներում միմիայն համապատասխան գիտելիքային հենք, աշխատանքային արդյունավետ փորձ, կարողություն, հմտություն և ձգտում ունեցող մասնագետների ներգրավում:
3. Իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների արդյունավետ, իրական, գործուն կառուցակարգերի ընդունում ու կիրարկում:
4. Կառավարության կառուցվածքի փոփոխություն և սուպերվարչապետական (գերկենտրոնացված իշխանության) համակարգի վերացում:
5. Քաղաքական համակարգի առողջացմանն ուղղված ինստիտուցիոնալ և մշակութային գործողությունների իրականացում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական զարգացման հիման վրա:
6. Պետական կառավարման և պետական ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով համալիր թվայնացման գործարկում:
7. Անհարկի վարչարարության ու կամայական հայեցողության բացառում և պետական կառավարման ուժնացված մարմինների օպտիմալացում:
8. Ընտրական օրենսդրության վերափոխում՝ հանրության քաղաքական ներուժի բացահայտման և պետականաշինության գործում օգտագործելու գործուն կառուցակարգեր ներդնելու տրամաբանությամբ: Ընտրական գործընթացների և ընտրախախտումների բացառման կառուցակարգերի շարունակական կատարելագործմանը:

ՏԱՐԱՃՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ՉԱՐԳԱՑՈՒՄ

1. Մարզպետարանների դերի հստակեցում
2. Ռազմավարան ու մարտավարական քաղաքականություն մշակել և կատարել կոնկրետ քայլեր՝ համայնքներում, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում մասնագետների (բժիշկների, ուսուցիչների, ՏՏ ոլորտի մասնագետների և այլն) պակասի լրջագույն խնդրի լուծման ուղղությամբ:
3. Մարզերում աշխատանքի գրավչությունը մեծացնելու նպատակով՝ սահմանել եկամտային հարկի արտոնյալ դրույթաչափ՝ կառավարության կողմից սահմանված մասնագետների համար:
4. Ներդրումները պետք է ուղղորդվեն դեպի մարզեր: Դա է միակ ձևը, և դա է ապահովելու տնտեսական աճի ներառականությունը և որակը, որովհետև անապահով համայնքում աշխատատեղերի բացումն ու եկամտի ստեղծումն է, որ լուծելու է այս խնդիրները:
5. ՀՀ տարածքներում գործարարության զարգացման, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով անհրաժեշտ է՝
 - 5.1. մշակել համապատասխան պետական աջակցության ծրագիր, որի շրջանակներում աջակցություն կտրամադրվի որոշակի չափանիշներին բավարարող՝ կայուն և ներառական աճին նպաստող ներդրումային ծրագրերին,
 - 5.2. համապատասխան կառույցների հետ համատեղ կազմակերպել դասընթացներ՝ ներդրումային ծրագրերի մշակման և դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
 - 5.3. դիտարկել նշված ներդրումային ծրագրերի վարկավորման տոկոսադրույքների սուբսիդավորումից զատ այլ արդյունավետ գործիքակազմի ներդրում:
6. ՀՀ մարզերում գործարարության համար բարենպաստ պայմանների ստեղծումը կարող է ներառել հարկային բարենպաստ ռեժիմների կիրառումը, տեխնոլոգիական վերազինմանն աջակցությունը, տրանսպորտային առանձին ծախսերի (օրինակ՝ մինչև սպառման շուկա) փոխհատուցումը, վարկերի տոկոսների սուբսիդավորումը, հողատարածք, շենքեր, շինությունների տրամադրումը, ենթակառուցվածքների ապահովումը, գազի, հոսանքի հատուկ

սակագների կիրառումը, ազատ տնտեսական գոտիների զարգացումն և կատարելագործումը, պետություն-մասնավոր գործընկերությունը):

7. Անհրաժեշտ է աջակցել և խթանել մարզային համայնքներում վերամշակող արդյունաբերության զարգացմանը, գյուղմթերքների արդար գնագոյացման, դրանց ընդունման և մթերման կայուն գործընթացների իրականացման ապահովմանը:
8. Մարզային համայնքներում սմարթ տեխնոլոգիական կենտրոնների ստեղծումը, ենթակառուցվածքների կառուցումը, սպորտ դպրոցների բացումը, մասնագետների վերապատրաստումը, մարզագույքով ապահովումը, մշակույթի կենտրոններով ապահովումը, որակյալ կրթության, բժշկական ծառայությունների հասանելիության ապահովումը, հիվանդանոցների արդիականացումը, որակյալ բժիշկներով ապահովումը չափազանց կարևոր են:
9. Համայնքների ինքնուրույնության, ինքնավարության ամրապնդման, ֆինանսական կարողությունների և սեփական եկամուտների ավելացման ապահովումը դիտվում են որպես կարևոր ուղղություններ:
10. Կարևոր ուղիներից մեկը կարող է լինել պետական բյուջեի եկամուտ հանդիսացող առանձին հարկատեսակի կամ հարկատեսակների որոշ մասը համայնքային բյուջե ուղղելը և համայնքի սեփական եկամուտ ճանաչելը:
11. Այս քայլը կլուծի մի շարք խնդիրներ`
 - 11.1. կմեծացնի համայնքի ֆինանսական կարողությունը, ինքնուրույնությունը և անկախությունը կառավարությունից,
 - 11.2. կստեղծի լրացուցիչ խթաններ համայնքների համար` ներդրումներ ներգրավելու, աշխատատեղեր ստեղծելու, բիզնեսի հետ գործընկերություն հաստատելու և համայնքի համար լրացուցիչ եկամուտներ հավաքագրելու նպատակով,
 - 11.3. կստեղծի համայնքային նշանակության բազմաթիվ խնդիրների լուծման համար ֆինանսական հնարավորություններ համայնքներում,
 - 11.4. գործուն քայլ կհանդիսանա ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ:
12. Սահմանամերձ և սահմանապահ համայնքները ունեն ռազմավարական կարևորության ՀՀ համար, որոնց բնակիչների խնդիրները պետք է մշտապես

գտնվեն երկրի հոգատար ուշադրության կենտրոնում: Սա ազգային անվտանգության խնդիր է:

13. Տարածքների համաչափ զարգացման նպատակով պետական բյուջեից համայնքներին տրվող ֆինանսավորում ոչ միայն բնակչության թվի, այլև այլ գործոնների հաշվարկով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ՝ որոշ համայնքների համար, ըստ անհրաժեշտության՝ տեղական կառավարման տարբերակված մոդելներ կիրառելու նպատակով:
2. Համատիրությունների ReStart: Առաջարկվում է նախագծով սահմանել անցումային շրջան, որի ընթացքում գործող համատիրությունները կլուծարվեն և կգործարկվի բազմաբնակարան շենքերի կառավարման նոր համակարգը: Կհստակեցվեն բնակիչների և կառավարող մարմինների միջև փոխադարձ պարտավորությունները և կնախանշվեն այդ հարաբերությունների իրավական հիմքերը:
3. Մասնավոր կառավարիչների ներգրավում: Առաջարկվում է նախագծով բազմաբնակարան շենքերի կառավարումը հանձնել մասնավոր կառավարիչներին, որոնք որպես իրավաբանական անձ սահմանված բյուջեով կիրականացնեն պահպանման ծախսերը և պատասխանատու կլինեն կատարված աշխատանքների համար: Նախագիծը չի բացառի արդյունավետ գործող համատիրությունների անցումը նոր համակարգին:
4. Կառավարիչների կողմից մատուցվող ծառայությունների չափանիշների հստակեցում և ամրագրում իրավական ակտերով: Առաջարկվում է նախագծով ամրագրել կառավարիչների կողմից մատուցվող ծառայությունների բովանդակությունը և ծավալները և ապահովել լիազոր մարմնի կողմից կատարողականի հսկողությունը:
5. Համայնքին վերահսկողական և կազմակերպական լիազորությունների օժտում: Առաջարկվում է համայնքին վերապահել որոշակի վերահսկողական և կազմակերպական գործառույթներ: Դրանցից մեկը կարող է լինել բնակիչների կողմից բազմաբնակարան շենքերի կառավարիչ չընտրելու դեպքում համայնքապետարանի կողմից ընտրության իրականացումը մրցույթի միջոցով:

6. Վճարման համապարտադիրություն: Նախագծով պետք է երաշխավորվի կառավարչին վճարվող գումարների համապարտադիրությունը, որը միտված կլինի ստանձնած պարտավորությունների անշեղ կատարմանը և ֆինանսական կայունությանը:
7. Կառավարչի հաշվետվողականության և գործունեություն և թափանցիկություն: Նախագծով պետք է երաշխավորվի կառավարիչների դրամական մուտքերի և ելքերի թափանցիկությունը ինչպես նաև կատարված աշխատանքի հաշվետվողականությունը: Պետք է ներդրվեն մեխանիզմներ, որոնք կապահովեն գործունեության համաժամանակյա ապահովումը:
8. Համայնք-կառավարիչ համագործակցություն: Նախագծով պետք է հնարավորություն ընձեռնվի համայնքին սահմանված դեպքերում և ծավալներով աջակցելու կառավարչին բազմաբնակարան շենքի առանցքային խնդիրների լուծման համար:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սահմանամերձ համայնքների զարգացման հայեցակարգն առաջարկվում է 4 ուղղություններով.

- Անվտանգություն,
- Ժողովրդագրական աճի պլանավորում,
- տնտեսական հնարավորություններ,
- սոցիալական կայունություն

Սոցիալական կայունություն

Սոցիալական կայունության կարևոր բաղադրիչներն են՝ զբաղվածությունը, կրթությունը և առողջապահությունը: Չբաղվածության ապահովումը պայմանավորված է տնտեսական հնարավորություններով:

Սահմանամերձ համայնքներում բնակչության տարաբնակեցման և տարածական ռազմավարական ընդլայնման նպատակով կառուցել գյուղական ավաններ քաղաքաշինական ժամանակակից տեխնոլոգիաներով:

Սահմանամերձ համայնքներում արտաքին վտանգից և կրակահերթերից դպրոցները պաշտպանելու և երեխաների կրթության իրավունքը երաշխավորելու համար առաջարկվում է ճամբարային պաշտպանված դպրոցի մոդելը՝ հնգօրյա ուսուցման պայմաններով: Կրթական ծրագրում գերակա նշանակություն է տրվելու

սպորտին, ռազմագիտությանը և քաղաքաշտպանությանը (տեսական և պրակտիկ): Սահմանամերձ համայնքներ գործուղված ուսուցիչներին ապահովել կացարանով և սահմանել պարզևատրումների ճկուն համակարգ:

Սահմանամերձ բոլոր համայնքներում բնակիչների մշակութային կյանքը կազմակերպելու համար առաջարկում ենք հիմնել մշակութային և սպորտային ակումբներ տարիքային բոլոր խմբերի համար: Ակումբները ապահովելու են բնակչության մշակութային, ժամանցային և կրթական պահանջմունքները: Հաղորդակցումը մշակույթին երաշխավորվելու է պետություն-համայնք համագործակցային ծրագրերի միջոցով:

Բնակչության բուժօգնության և բուժսպասարկման համար սահմանամերձ բոլոր համայնքներում ստեղծել և վերազինել գյուղական ամբուլատորիաներ: Առաջարկվում է սահմանամերձ համայնքներ գործուղել տեղամասային թերապևտների և մանկաբույժների, որոնք բացի ամենամյա աշխատավարձից կստանան նաև միանվագ գումար և կպարտավորվեն առնվազն 5 տարի ծառայություն մատուցել սահմանամերձ համայնքում:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը կարևորում է նաև պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարումը:

- Պետական գույքի կառավարման արդյունավետությունը պետք է բարձրացնել, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության հիման վրա:
- Պետք է բարձրացվի նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը:

VI. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԱՂԱՓԱՐ

Պարտադրված օրինակարգից դեպի իրավական մշակութային միջավայր

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Իրավական դաստիարակություն, ներդաշնակ օրենսդրություն և արդյունավետ արդարադատություն

ՆՊԱՏԱԿ

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը պետականաշինության զարգացման ուղին տեսնում է Հայաստանի Հանրապետությունում իրավունքի գերակայության երաշխավորմամբ իրավական պետության կառուցման մեջ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավունքի գերակայության ամբողջական կենսագործումը հնարավոր է հետևյալ քայլերի պարտադիր իրականացմամբ`

- իրավունքի, որպես մարդու` համընդհանուր և անհրաժեշտ ազատության, հավասարության (հավասար հնարավորությունների) և արդարության անհրաժեշտ ձևի սահմանում,
- օրենսդրության մեջ իրավունքի ամբողջական ամրագրում և օրենքի գերակայության երաշխավորում,
- օրինաստեղծ գործունեության բոլոր փուլերում, սոցիալական լեգիտիմության, սոցիալական անհրաժեշտության առկայության, մասնագիտական արհեստավարժության, գիտականության սկզբունքների պարտադիր առկայության ապահովում,
- օրենսդրությունում իրավական որոշակիության ապահովում,
- սոցիալական զարգացմանը զուգահեռ իրավունքի գերակայության արտահայտման այլ ձևերի շարունակական հայտնաբերում, ամրագրում և հետևողական կենսագործում:

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը նախանշել և հետամուտ է լինելու իրավունքի գերակայության հետևյալ հինգ սկզբունքների իրագործմանը՝

1. պետական իշխանության ներկայացուցիչների՝ օրենքով սահմանված կարգով հաշվետվողականությանը,
2. օրենսդրության արդարությանը, թափանցիկությանը, հստակությանը, հրապարակայնությանը, կայունությանը և հավասարապես կիրառելիությանը,
3. արդարադատության անկախությանը, անկողմնակալությանը և անխուսափելիությանը,
4. արդարադատության ժամանակին իրականացմանը՝ բավարար քանակությամբ պրոֆեսիոնալ, բարոյական, անկախ ու անկողմնակալ անձանց կողմից,
5. իրավական կանխատեսելիության սկզբունքը:

Նկարագրված սկզբունքների հիման վրա, «Լուսավոր Չայաստան»-ը հետևողականորեն կյանքի է կոչելու հետևյալ գործառույթները, որոնք նախանշում են երկրում իրավունքի գերակայության ապահովմանն ուղղված գործողություններն ու դրանց ուղղությունները: Դրանք են՝

1. իշխանության ճյուղերի լիազորությունների օրենսդրական սահմանափակում, իշխանության ճյուղերի զսպումների և հակակշման գործուն, արդյունավետ մեխանիզմների ներդրում և կիրարկում,
2. պայքար կոռուպցիայի դեմ,
3. օրինականությունը և անվտանգությունը,
4. մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները,
5. պետական բաց և թափանցիկ կառավարումը,
6. օրենքի հարկադրումը,
7. ընդհանուր դատական իշխանության (քաղաքացիական, քրեական և վարչական դատարաններ) արդար, անկողմնակալ, ինչպես նաև սահմանադրական արդարադատության իրականացումը:

Միաժամանակ անհրաժեշտ է, որ հանցավոր դրսևորումները ոչ միայն ժամանակին պատժվեն, այլև առաջին հերթին կանխվեն իրենց դրսևորման առաջնային օջախներում՝ առավել ընդունելի, օրինական սովորույթների և մշակույթի ներդրման միջոցով:

ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՄԱՎԵՏ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

«Լուսավոր Չայաստան» կուսակցությունը մատչելի և արդյունավետ պետական անխափան վարչարարությունը, պատժի անխուսափելիությունը, հանցավորության մակարդակի շարունակական նվազումը, հասարակական համերաշխությունն ու արդարության մթնոլորտի աճը:

Արդարադատությունը պետք է մատչելի լինի բոլորի համար՝ անկախ ֆինանսական կարողություններից, և արդյունավետ լինի ողջամիտ ժամանակում կայացված որոշումներում, վճիռներում և դատավճիռներում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Վարչարարության որակի բարձրացում, որպեսզի անհարկի դատական վեճեր չլինեն:
2. Արդյունավետ արդարադատության իրականացման օրենսդրական փոփոխություններ:
3. Դատարան դիմելու սուբյեկտիվ և օբյեկտիվ խոչընդոտների վերացում:
4. Դատավորների քանակի և աշխատակազմի թվակազմի ավելացում:
5. Դատավորի գրասենյակի կարողությունների զարգացում:
6. Վեճ չպարունակող գործերի տեղափոխում այլ մարմինների իրավազրոության ներքո:
7. Վեճերի այլընտրանքային (արտադատական) լուծման ինստիտուտների զարգացում:

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

ՆՊԱՏԱԿ

Չայտնի է, որ դատական իշխանության ծանրաբեռնվածությունը պայմանավորված է դատարանի՝ որպես վեճերի լուծման առանցքային մարմնի առկայությամբ:

Մինչդեռ դատական իշխանության արդյունավետությունը կտրուկ բարձրանում է, երբ նրան զուգահեռ գործում են վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգեր՝ արբիտրաժ, հաշտարարություն և այլն:

Արբիտրաժի և հաշտարարության ինստիտուտները նպաստում են նաև առևտրային և ընդհանրապես՝ տնտեսականու ներդրումային հարաբերությունների ակտիվացմանն ու զարգացմանը:

Արբիտրաժը, հաշտարարությունը և այլ կառուցակարգերը դառնում են ներդրումային, առևտրային, բանկային և այլ բնակագառններում առաջացող վեճերի լուծման առաջնային մարմիններ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգերի օգտագործման պահանջարկի մեծացման, խրախուսման օրենսդրական և ինստիտուցիոնալ լուծումների ներդրում:
2. Արբիտրաժի, հաշտարարության կրթության և վերապատրաստման կառուցակարգերի ներդրում:

ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ ԴԱՏԱՎՈՐ՝ ԱՆԿԱԽ ԵՎ ԱՆԱՉԱՌ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Ջնարավոր չէ ունենալ անկախ և անաչառ, կոռուպցիայից զերծ դատական իշխանություն, եթե ապահովված չեն օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններն արժանապատիվ դատավոր ունենալու համար:

Դատավորի բարձր սոցիալական հեղինակությունը պետք է լինի նրա արժանապատվության և անաչառության հենարանը, որն իրական չէ առանց նրա արժանապատիվ կենսական ու աշխատանքային պայմանների, սոցիալական երաշխիքների բարձր մակարդակի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Օրենսդրական փոփոխություններ:

2. Դատավորի սոցիալական հեղինակության բարձրացման հասարակական և քաղաքական աշխատանք:
3. Դատավորի արժանապատիվ կենսապայմանների և սոցիալական երաշխիքների ներդրման իրական կառուցակարգերի ներդնում:
4. Մասնագիտական, էթիկական թերացումներ, իրավախախտումներ թույլ տված դատավորներին հեռացնելու իրական կառուցակարգերի ներդնում:
5. Դատավորի պաշտոնում ներգրավել բարձր մարդկային և բացառիկ արհեստավարժ իրավաբան մասնագետների:
6. Ներդնել դատավորների ներքին և արտաքին անկախության և թերացող կամ իրավախախտ դատավորներին հեռացնելու իրական կառուցակարգեր:

**ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ, ԱՆԿԱԽ ԵՎ ԱՆԱԶԱՌ ԻՐԱՎԱՊԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐ
ՉԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՅՔԱՐ**

ՆՊԱՏԱԿ

Չնարավոր չէ ունենալ հանցավորության դեմ արդյունավետ պայքար, ֆինանսական ճնշումներից, քաղաքականությունից ազատ և անաչառ օբյեկտիվ մեղադրանքի առաջադրում, դրա պաշտպանություն, եթե չկան անկախ իրավապահ մարմիններ՝ հետաքննչական, քննչական մարմիններ, դատախազություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Իրավապահ մարմինները, ներառյալ՝ ոստիկանությունը, քննչական մարմինները, դատախազությունը համալրել հայրենասեր, արհեստավարժ ու բարձր մասնագիտական գիտելիքների տեր մարդկանցով:
2. Ապահովել արժանապատիվ կենսապայմանների, սոցիալական երաշխիքների, անվտանգային աշխատանքային և կյանքի պայմանների համար իրական կառուցակարգերի միջոցներով:
3. Ապահովել իրավապահ մարմինների ամբողջական ապաքաղաքականացումը և ենթարկվելը միայն ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրությանը: Իրավապահ աշխատակցի սոցիալական հեղինակության բարձրացման հասարակական և քաղաքական աշխատանք:
4. Իրավապահ աշխատակցի արժանապատիվ կենսապայմանների և սոցիալական երաշխիքների ներդրման իրական կառուցակարգերի ներդնում:

5. Մասնագիտական, էթիկական թերացումներ, իրավախախտումներ թույլ տված իրավապահ աշխատակցին հեռացնելու իրական կառուցակարգերի ներդրում:

ԿՈՌՈՐԴՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

ՆՊԱՏԱԿ

Չայաստանի Չանրապետությունում ժողովրդավարացման, տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործընթացների արգելակման հիմնական պատճառներից մեկը կոռուպցիան է՝ իր բոլոր դրսևորումներով՝ կաշառակերություն, ֆավորիտիզմ և նեպոտիզմ:

Նպատակը լինելու է կոռուպցիայից ազատ պետական կառավարման ձևավորումը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Լուսավոր Չայաստան»-ն իր գործունեությամբ պայքարելու է ինչպես կաշառակերության, պետական ունեցվածքի հափշտակության, այնպես էլ ստվերային տնտեսության և հովանավորչության դեմ, որը կներառի՝

1. հանրային կառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության կատարելագործման ժամանակակից մեխանիզմների ներդրում և կիրառում,
2. դատական համակարգի անկախության և արդարադատության անխուսափելիության ապահովում,
3. ավելորդ վարչարարության դեմ շարունակական պայքար և պետական վարչական անձնակազմերի օպտիմալացման ժամանակակից մեխանիզմների ներդրում,
4. բնակչության իրավագիտակցության և իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով պետական հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ներդրում: